

ISSN 1829-1155

Հիմնադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝

Գագիկ Նարայանյան
Արմեն Նարայանյան
Վահե Սյրեխանյան
Վարդյա Նախանջյան
Վարդի Դավթյան
Ռաֆայել Դավթյան
Անուշան Նարայան

Գլխավոր խմբագիր՝
Գոհար Աշուրյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2(47)
2008

© ԳՂ ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

* ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԲՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ - Ծ. ԾՐԱԳՅԱՆ	7
* ԵՐԿԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԻԻ, ԱՍՐԱԳՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ - Ն. ՍՈԼՈՄՈՆՅԱՆ	15

II. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (717-728)

* ՍԳՈ-717. 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 28-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	23
* ՍԳՈ-718. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 3568-1 AM ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ) ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	26
* ՍԳՈ-719. ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 26-ՐԴ ԳԼԽԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	29
* ՍԳՈ-720. ՔԱՂԱՔԱՅԻ ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 419 ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	44
* ՍԳՈ-721. ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻ, ԽԱՉԻԿ ՇԱՀԱԶՅԱՆԻ, ԿԱՐԻՆԵ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ՍԵՎԱԿ ԴԵՐՉՅԱՆԻ, ՎՈԼՈԴՅԱ ԱԲԱԶՅԱՆԻ ԵՎ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՍՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 5 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	51
* ՍԳՈ-722. ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՒԲԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 40.1. ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ «ԳԻՄՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԳԻՄՈՒԴ ԿՈՂՄԻՑ» ԳՐՈՒՅԹԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	63
* ՍԳՈ-723. «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԾՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 73 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	70
* ՍԳՈ-724. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԳՅՈՒԿԱԿԱՆ ԴԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	77
* ՍԳՈ-725. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 4369-AM ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱԹԱՀԱՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐԿ) ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	82


* ՍԳՈ-726. 1973 թվականի սեպտեմբերի 3-ին ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԵՎ 1979 թվականի ձմեռային 22-ին բոնոնոմիալ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ՝ ԱՆՀՇԱՅՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴՐԱՆԿԱՆ ՈՒ ԲՈՒՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 85

* ՍԳՈ-727. 2005 թվականի սեպտեմբերի 16-ին ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻԿԻՆԳԻ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 88

* ՍԳՈ-728. 2007 թվականի սեպտեմբերի 25-ին ՅԱԼԹԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 92

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 95

* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 95



**2008թ. մարտի 23-ին լրացավ
ՀՀ սահմանադրական դատարանի
Նախագահ, իրավագիտության դոկտոր,
պրոֆեսոր
Գագիկ Հարությունյանի ծննդյան
60-ամյակը:**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽՆԱԳԱՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒՄՅԱՆՅԱՆԻՆ**

Մեծահարգ պարոն ՀԱՐՈՒՄՅԱՆՅԱՆԻ:

Մեր ունեցած մեր գերմագույն շնորհավորակներն ու բարեմաղթանքները Ձեր ծննդյան 60-ամյակի առիթով: Ծնորհավորելով 60-ամյա խորհրդով, ի խորոց սրտի ցանկանում ենք Ձեզ ու Ձեր ընտանիքին քաջառողջություն, մաղթում լիսպրունակ տրգակություն, արեւշարություն, անսպառ եռանդ եւ աշխատանքային հազրություններ, ինչին իրապես Մոք արծակի եք:

Ձեզ հետը անցած ճանապարհի համար հազրելով մեր գոհունակությունը, նշում ենք, որ քասնամյակից ալեդի միտակն անցած ևույն ճանապարհը քարեգրությունն է ևսաւ Ձեր անհիգական զանկերով կայացած Մաւհանադրական դարարանի:

ՄԴ-ի արեդծման օրվակից միև սրս Մոք Ձեր ալյունով առեալ ինչ արեպիք, որ այն դառնա Մաւհանադրական վերաակորություն գործուն կառույց, իրապես համարվի ժողովրդավարության մեծագույն նախնուններից մեկը՝ ծառայի երկրի օրեակից, գործադիր եւ դարական իշխանությունների աւհանադրորեն աւրագրված լիապրությունների ներդաշնակ իրականապեմանը, ևորնարիվ ակրերի աւհանադրականությունն ապահովանաւ, մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ապարությունների կայուն երաշխիքների արեդծմանը, երկրում իրավունքի գերակայության հասարականաւ:

Ձեր ապրած ողգ գիրակցական կյանքը ժողովրդին և խրոմանի մի և երգաշենակ ամբողջություն է, եւ մենք ամէրի քան վարստ եւք, որ այդ գակքերը կշարունակեք գործադրել լույն հասարակականությանը ու հագողությանը, մնալով հավատարիմ Ձեր համոյնմեքներին: Ձեր ակնոգևարեկ գործունեությունն արդունևալորել է աչգոգուր և բայուն շեքքերուններով, ակնհայր են Ձեր և երդրունները ժանակակցիկ սահակևարական իրավունքի պարգայնակ գործում ինչպես Հայասրակում, այնպես էլ կրա սահակներիկ դուր: Մենք Ձեկ գիրեւք որպես ակնևալոր պերակական գործի, գիրակակների ու մակկալարծի, մարդու, ում բևությունն օժրել է ինևարևությունը ու րադակնով: Ձեր գիրակակ աշխարություններն ու հորվածները, գրքերն ու մեևագրությունները պերակակ շիևարությունն եւ սահակևարական իրավունքի բևագալարներին հանար դարձել են ուրեյուրային ինչպես մեր երկրում, այնպես էլ միգայգային սուպրեյում:

Անյում րարիևերին Ձեր դեկալարությանը ՀՀ սահակևարակակ դայարակակ ակնկներով մեծ փորշություններով, հագողությանը ակնով ևուե իր կայայնակ դժկարին եակևարիք, դառևարով սահակևարակակության իրակակ երաշիքի, ևիանեյ մեծ հեղիևակություն Հայասրակում եւ կրա սահակներիկ դուր: Միսծակակ, մեծակես շևրիկով Ձեր հավատարակիք պահվածքի, մշրակես կարեուրվել ու կարեուրվում են երկրի շահերի առակևաեերթություններն ու քադաքակրթության շեքքերունները հակուն մարդու ծառայեկելը, օրեևքով ու արդարությանը մեր կյակքը վարելու հրակայակակ իրակունքի գերակայության երաշխակրումը պարարդիք եւ հիևակակ իևդիք դարձելը: Հակոված եւք, Ձեր դեկալարությանը, Ձեր փորշով, հասարակականությանը ու ևուե Ձեր ակնունգ գործունեությանը դայարակակ հագողությանը կշարունակի իրակակակնելը իր առգե ծառայում ևոր իևդիևերը:

Բուք հանաի եք վկայակնում երգակակիշարակ Աայգեև Առակին կաթողիկուին՝ «Մարդ ակևարի գերագույն պարդր, գերագույն պարծակք բարության գիրակցության հրակայակակն է...»: Այս բարության բարձր գիրակցումը Ձեր կողմիկ միշր բևկարվել է հակուր պարշածի եւ միայն ևնակ պահվածքով, ժողովրդի ու պերության շահերի առակևաեերթության գիրակցումով է հևարակոր հասարակակակ հանաշայևության հեևքի վրա սոյիարակակ հակրության ինևարակրված գույի շարունակակակության երաշխակրումը, որն էլ իեզակկորեև եւ առակ կողևակի սպեեյություններին մշրակես արվում է Ձեր կողմիկ: Ապրելով ՀՀ իրորիքարակակ փոխևաիսակակի, ՀՀ փոխևաիսակակի, ՀՀ վարշակայերի, ՀՀ ՄԴ ևաիսակակի պաշրունները, Բուք մեծ ակնոգ եք և երդրել հայոյ պերակակության շեակրունակ կարեուրակգույն եւ պարակիակևարու գործում:

Վարած ենք, որ վարսունևանյա հորեղյանի բարչունեից Ձեր հետհայայի բոլոր պատերի մեզ Պոթ միայն հպարտության պատում էք ապրելու: Արկին անգամ շնորհավորում ենք Ձեզ, մաղթում բեղմնավոր գործունեություն: Ի բարություն մեր երկրի ու ժողովրդի:

Մենք կհամար ենք Ձեր այդ ապրումը եւ նորից շնորհավորելով Ձեզ 60-ամյակի առիթով, նորանոր հազարություններ, երգանկություն, արեւշապություն եւ ամենայն բարիք ենք մաղթում Ձեզ եւ Ձեր ընտանիքին:

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ
Կ. ԲԱԷԱՅԱՆ
Հ. ՊԱՆԻԵԼՅԱՆ
Ֆ. ԹՈՒՆՅԱՆ
Զ. ՊՆԿԱՍՅԱՆ
Հ. ՆԱԶԱՐՅԱՆ
Դ. ՊԱՊԱՅԱՆ
Վ. ՊՊՊՈՍՅԱՆ
Ա. ՀԱՆՈՔՅԱՆ

Հորեղյանի առթիվ պարոն Հարությունյանին հասցեագրված բազմաթիվ շնորհավորանքներ են ստացվել միջազգային կազմակերպություններից, արտասահմանյան երկրների սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմիններից, ՀՀ և ԼՂՀ նախարարներից, դատական համակարգի, գիտության, կրթության ու մշակույթի ճանաչված ներկայացուցիչներից:

Շնորհավորանքներում ջերմ բարեմաղթանքներ են հղված պարոն Հարությունյանին՝ որոնցում կարևորվում և բարձր են գնահատվում միջազգային ճանաչում ձեռք բերած սահմանադրագետի գիտական և մանկավարժական գործունեությունը, ավանդը՝ Հանրապետությունում սահմանադրական արդարադատության իրականացման, Սահմանադրության գերակայության և անմիջական գործունեությունն ապահովելու գործում:

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմը սիրով և հարգանքով միանում է պարոն Գագիկ Հարությունյանին հասցեագրած բոլոր շնորհավորանքներին՝ բարեմաղթելով քաջառողջություն, երջանկություն, իղձերի իրականացում, նորանոր հաջողություններ և ամենայն բարիք:



ԵՐԻՏԱՍԱՐԳ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲՈՆ

Ծովինար ճՐԱԳՅԱՆ

*ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի դիմումների ընդունման
բաժնի գլխավոր մասնագետ*

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ**

Մարդկային հասարակության զարգացման ողջ ընթացքի ուսումնասիրությունը վկայում է, որ մարդու իրավունքների ոտնահարումն ու արհամարհումը միշտ էլ հանգեցրել են բարբարոսական, մարդկային խիղճը վրդովող գործողությունների: Միաժամանակ, հասարակարգերի զարգացման յուրաքանչյուր աստիճանում, անհրաժեշտաբար մշակվել են ավանդույթներ, ստեղծվել են սովորույթային իրավունքի, հետագայում օրենքի ուժով մարդու իրավունքների պաշտպանության համապատասխան համակարգեր: Դրանց աստիճանական զարգացման ողջ պատմության ուսումնասիրությունից ևս հետևում է, որ մարդկային անհատի արժանապատվության, տղամարդու և կնոջ իրավահավասարության, սոցիալական առաջադիմության և կենսապայմանների բարելավումը ընթացել է համապատասխանաբար առավել ազատության պայմաններում:

Ժամանակակից աշխարհում դժվար է պատկերացնել որևէ պետություն առանց քիչ թե շատ զարգացած օրենսդրական համակարգի՝ օրենքներ, որոնք կոչված են կարգավորելու բազմազան և տարաբնույթ հասարակական հարաբերություններ, դրանց տալով իրավահարաբերության բնույթ: Ժողովրդավարական երկրներում սկզբունքային, առավել կարևոր նշանակություն ունեցող պետական և հասարակական հարաբերությունները ամրապնդվում և կարգավորվում են Սահմանադրությամբ: Այն բովանդակելով աշխարհայացքային հստակ կողմնորոշիչներ, այնպիսի նորմ-նպատակներ ու նորմ-սկզբունքներ, որոնք ամրագրում են հասարակական որոշակի արժեքների համակարգ ու դրանց ձգտելու միջոց-

ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ներն ու մոտեցումները, հստակեցնում է նաև գաղափարախոսության ուղղվածությունը¹:

Մի շարք երկրների Սահմանադրությունների ուսումնասիրությունը վկայում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները գտնվում են ուշադրության կենտրոնում: Նշված խնդիրն իր արտացոլումն է գտել Վրաստանի, Հունգարիայի, Ադրբեջանի, Մակեդոնիայի, Ուկրաինայի, Հունաստանի, Դանիայի և մի շարք այլ պետությունների հիմնական օրենքներում²:

Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությամբ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանադրաիրավական դրույթները ամբողջ պետության կազմակերպման ու գործունեության իրավական տիպի չափանիշ են: Երկրի բարձրագույն իրավաբանական ուժով օժտված օրենքը իրավական պետության հիմնարար արժեքները ամրագրում է հետևյալ երեք կարևորագույն բնութագրիչներով.

«Մարդը նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը... (ՀՀ Սահմանադրության, հոդվ. 3):

Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Մարդու իրավունքները մարդկանց կեցության արտահայտման, ազատության, հավասարության ձևի իրականացման որոշակի փոխկապակցվածությունն ու համարժեքությունն է: Նման իրավահավասարության երաշխավորմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ամրագրում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների լայն շրջանակ:

Հայաստանի Հանրապետությունում անհատի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմքերն ամրագրված են Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները բնութագրող Սահմանադրության երկրորդ գլխում³:

Մարդու իրավունքների պաշտպանությունը յուրաքանչյուր պետության սահմանադրական և միջազգային իրավական կարևոր պարտավո-

¹ Գագիկ Հարությունյան. Սահմանադրական մշակույթ, Երևան 2005 թ. էջ 19:
² Վրաստանի Հանրապետության 24.08.1995թ-ին ընդունված Սահմանադրության 2-րդ գլուխ, Հունգարիայի Հանրապետության 18.08.1949թ-ին ընդունված Սահմանադրության 12-րդ գլուխ, Ադրբեջանի Հանրապետության 12.11.1995թ-ին ընդունված Սահմանադրության 3-րդ գլուխ, Մակեդոնիայի Հանրապետության 17.11.1991թ-ին ընդունված Սահմանադրության 2-րդ մաս, Ուկրաինայի Հանրապետության 28.06.1996թ-ին ընդունված Սահմանադրության 2-րդ գլուխ, Հունաստանի Հանրապետության 11.06.1975թ-ին ուժի մեջ մտած Սահմանադրության 2-րդ գլուխ, Դանիայի թագավորության 03.06.1953թ-ին ընդունված Սահմանադրության 8-րդ գլուխ:
³ ՀՀ Սահմանադրության 14 - ից 48-րդ հոդվածները, էջ 7-19:

րություններից մեկն է: Պետության հիմնախնդիրն է ստեղծել մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների հուսալի համակարգ, որը պետք է ներառի սկզբունքների, օրենքների, մեխանիզմների, կառույցների մի ամբողջություն:

Պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը օրենսդիր մարմնի միջոցով, ներպետական իրավական համակարգի ստեղծմամբ: Հարկ ենք համարում նշել, որ մեր երկրի Սահմանադրությունը որդեգրել է ներպետական օրենսդրության մեջ միջազգային պայմանագրային դրույթների ուղիղ փոխակերպման եղանակը: Այսինքն՝ սահմանադրական դրույթի համաձայն, միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են (հիարկե վավերացվելուց հետո) և օժտված են ավելի բարձր ուժով, քան ներպետական օրենքները⁴: Ավելին, վավերացված միջազգային պայմանագրերում և ներպետական օրենքներում սահմանված նորմերի միջև հակասություն առաջանալու դեպքում կիրառվում են պայմանագրի դրույթները⁵:

Միջազգային իրավական նորմերի ուսումնասիրությունը վկայում է, որ ներպետական օրենսդրության մշակման ելակետը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» դրույթներն են: Բացառություն չի կազմում Հայաստանի Հանրապետությունը, որում, ինչպես նշվեց վերևում, երաշխավորվում են սահմանված բոլոր իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» նախաբանի 1-ին մասում ընդգծվում է, որ «մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը հանդիսանում է ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմք», որպես մի խնդրի, որին ձգտում են բոլոր ժողովուրդները և պետությունները⁶:

«Արժանապատվությունը» արժևորում են բոլոր մարդիկ և կախված մարդու ինքնագնահատականից և արժեքների վերագնահատումից այդ զգացումը փոփոխական հասկացություն է: Յուրաքանչյուր ոք ազատ է վերարժևորելու իր ինքնագնահատականը և ոչ ոք իրավունք չունի որևէ կերպ խոչընդոտելու կամ այլ կերպ ազդելու անձի ինքնարժևորմանը: Այսպես, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 1-ին հոդ-

⁴ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված:

⁵ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագիրք բուհերի համար, Երևան 2000 թ. էջ 65-67:

⁶ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված 10.12.1948 թ.:

ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

վածը սահմանում է, որ. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով»: Հարկ է ընդգծել, որ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի համապատասխան, ոչ միայն անձի արժանապատվությունն է ուշադրության կենտրոնում, այլև անհատի կյանքը՝ ծննդյան պահից մինչև մահ ընկած ժամանակահատվածը: Ի հաստատումն որի «յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք»:

Առաջնորդվելով միջազգային իրավունքի սկզբունքներով և նորմերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որպես այդ սկզբունքների և նորմերի բաղադրիչի, ամրագրում է մարդու ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Ի հավաստումն դրա, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, ինչպես վերևում նշեցինք, 3-րդ հոդվածի երեք կարևորագույն բաղադրիչներն իրենց փոխկապակցվածության մեջ երաշխավորում են ինչպես իրավունքի գերակայությունը, այնպես էլ մարդու և քաղաքացու իրավունքների դերը և տեղը սահմանադրաիրավական հարաբերություններում:

Ուստի և պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածը ամրագրել է, որ «մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից», իսկ 47-րդ հոդվածը ընդգծում է, որ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները եւ արժանապատվությունը»:

Ազատության իրավունքը սերտորեն կապված է անձեռնմխելիության՝ պետության կողմից երաշխավորված մարդու անվտանգության և ազատության հետ, որը բացառում է մարդու անձի, պատվի, արժանապատվության, բարի համբավի նկատմամբ ցանկացած ոտնձգություն⁷:

Անվիճելի է, որ «ազատություն» հասկացության հիմնական և անօտարելի բաղադրիչներից մեկը մտքի ազատությունն է: Մտքի ազատությունը մարդու բնական վիճակն է, որը փոխկապակցված է անհատի կողմից շրջապատի երևույթների ընկալման հետ: Շրջապատի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքը մարդու աշխարհընկալման անբաժանելի մասնիկն է, նրա անհատականության առանձնացման ձևը:

Անձի անհատականությունը ձևավորվում է հոգեբանական, սոցիալ-մշակութային, էսթետիկական, քաղաքական և մի շարք այլ գործոնների արդյունքում: Որպես կանոն մարդը իր մտքերով և զգացմունքներով այլ

⁷ Генрик Хачатрян. “Первая Конституция Республики Армения”, Ереван 2001г, глава 5.

անձանց հետ կիսվելու անհրաժեշտություն է զգում: Նշված անհարժեշտության արդյունքը խոսքի ազատության իրավունքի գոյությունն է, իրավունք՝ իր մտքերը ազատ արտահայտելու բանավոր, գրավոր, գեղարվեստական և այլ ձևերով: Մտքի ազատությունը և խոսքի ազատությունը այն կատեգորիաներն են, առանց որոնց մարդու կյանքը և ամբողջ հասարակության գոյությունը իմաստագրկվում և արժեզրկվում է:

Տեսական այս ընդհանրացումներից հետո, հեղինակը իր առջև խնդիր է դնում հետազոտել մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման, մասնավորապես, ընտանեկան իրավունքի ոլորտի որոշ արդիական հիմնահարցեր: Վերջիններիս առկայությունը ընտանիքի, որպես հասարակության սկզբնական բջջի, ուսումնասիրությունը դարձնում է արդիական: Սահմանադրաիրավական նորմերը իրենց արտացոլումն են գտել ամուսնության տարիքի հասած անձանց ընտանիքի անդամների նկատմամբ վարքագծի չափանիշները կարգավորելիս: Այս սկզբունքներն իրենց ամրագրումն են գտել երկրի հիմնական օրենքի 35-րդ հոդվածի դրույթներում, ըստ որի «ընտանիքը հասարակության բնական եւ հիմնական բջիջն է:

Ամուսնական տարիքի հասած կինը եւ տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք...»: Ի դեպ նշենք, որ սույն նորմը գերակա է և առաջնային Հայաստանի Հանրապետության օրենսդրական ողջ համակարգում:

Հայաստանի Հանրապետությունում ընտանիքը գտնվում է պետության և հասարակության հոգածության և պաշտպանության ներքո: Սահմանադրությունը պաշտպանում է անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, ընձեռելով նաև անձին իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունքը: Պետությունը երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքները՝ չմիջամտելով նրանց անձնական կյանքին, պահպանելով անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, ինչպես նաև արգելում է տանջանքների, բռնության և դաժանության գործադրմամբ անձի արժանապատվության նսեմացումը: ՀՀ Սահմանադրությունը ըստ էության արգելում է պետական մարմիններին, պաշտոնատար անձանց, անհատին միջամտելու քաղաքացիների անձնական կյանքին⁸:

Պետությունը իր օրենսդիր մարմնի միջոցով մշակում և ընդունում է այնպիսի համապարտադիր վարքագծի կանոններ, որոնք կարգավորում են ընտանիքի ստեղծման և գոյատևման երաշխիքները, պաշտպանվա-

⁸ Ս. Վ. Առաքելյան «Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից» Երևան 2001 թ.: Ելնելով ոչ օրինաչափ գործողություններ իրականացնող սուբյեկտների շրջանակից տարբերում ենք ներգործության երկու ուղղություն՝ «ուղղահայաց» և «հորիզոնական»: «Ուղղահայաց» ներգործությունը պետության կողմից անձի կամ նրա ընտանիքի նկատմամբ կատարված ոչ օրինաչափ գործողություններն են, իսկ «հորիզոնականը»՝ առանձին անձանց կամ խմբերի կողմից իրենց մտանի նկատմամբ կատարվող ոչ օրինաչափ գործողություններն են:

ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ծությունը հասարակության կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոչ օրինաչափ գործողություններից:

«Ընտանիք» հասկացությունը միշտ էլ եղել է սոցիոլոգների, քաղաքագետների, իրավագետների հետազոտման առարկա: Բազմաթիվ գիտնականների, մասնագետների աշխատություններում մենք հանդիպում ենք այդ հասկացության տարաբնույթ և ոչ ավարտուն մեկնաբանությունների: Մեր ծուկերպմամբ ընտանիքը միևնույն հարկի տակ համատեղ տնտեսություն վարող և ընդհանուր շահեր հետապնդող անձանց խումբ է, որոնք միմյանց հետ կապված են հուզագոյացմունքային և արյունակցական, ազգակցական ամուր կապերով, որոնք ունեն տարբեր իրավական նորմերով սահմանված փոխադարձ իրավունքներ և պարտականություններ:

Միաժամանակ նշենք, որ ընտանիքը որպես այդպիսին չի հանդիսանում իրավունքի սուբյեկտ, նրա շահերը և իրավունքները պաշտպանվում են ընտանիքի ներսում համախմբված մարդկանց օրինական շահերի և իրավունքների պաշտպանման միջոցով: Պետությունը միջամտում է ընտանեկան հարաբերություններին օգտագործելով ներգործման և կարգավորման տարբեր մեթոդներ: Պետության միջամտումը ընտանեկան հարաբերություններին կայանում է ընտանիքի անդամների համար նախատեսված որոշակի խումբ իրավունքների, պարտականությունների, սահմանափակումների, արգելքների սահմանումով: Ընտանիքի կայունության ապահովման երաշխիքներից է բարոյական սկզբունքների պահպանումը:

Արդի ժամանակաշրջանում ընտանիքի հիմնահարցերի ուսումնասիրությունը հանգեցնում է նրան, որ հստակեցված չեն պարտավորությունները ընտանիքի և հասարակության առջև, որոնց չկատարումը բարոյական և իրավական նորմերով արգելված են: Այս հանգամանքով կարելի է բացատրել այն երևույթը, որ Հայաստանի Հանրապետությունում, անձի անձեռնմխելիության իրավունքի խախտման դեպքերը, չհանդիպելով ոչ մի արգելքի, ընտանիք են ներխուժում:

Բռնությունը և ագրեսիան տարածված երևույթներ են հասարակության կյանքի որոշ շերտերում: Սակայն դաժանության վերածվող ագրեսիան պատժելի արարք է և մեր հասարակության մեջ թվարկված երևույթների առկայությունը փաստ է: Ներընտանեկան բռնությունների բացահայտման նպատակով, համապատասխան ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի 11 ստորաբաժանումներում, Երևան քաղաքի 13 ընդհանուր իրավասության դատարաններում և ՀՀ վերաքննիչ դատարանի քաղաքացիական պալատում 2005-2006թթ. քննված գործերում:

Ոստիկանության ստորաբաժանումներում ուսումնասիրված 61 կանխարգելիչ գործերը հաշվառված են զոհի կրկնակի դիմումի հիման վրա, 4 քրեական գործերից մեկը կարճվել է կողմերի հաշտության արդյունքում:

Դատական ատյաններում ուսումնասիրվել են 93 քաղաքացիական և 8 քրեական գործեր: Քաղաքացիական գործերի թվին են պատկանում անչափահաս երախայի ապրուստի միջոցի բռնագանձման, անչափահաս երեխային և նրա մորը երեխայի հոր սեփականության իրավունքով պատկանող կամ հաշվառման վայրի բնակելի տարածքում բնակեցման թույլատրման, հայրության ճանաչման, ծնողական իրավունքից զրկելու, ամուսնալուծության թույլատրման, նախկին կնոջ բնակարան ներխուժելու և խուլիգանական արարքների հետևանքով սեփականության իրավունքով նախկին կնոջը պատկանող գույքին հասցված վնասի փոխհատուցման հայցապահանջներով քննված վեճերը:

Քրեական գործերի ուսումնասիրության արդյունքում գրանցվել է կնոջը միջին ծանրության մարմնական վնասվածք հասցնելու դեպքեր, կնոջ կողմից ամուսնուն դանակահարելու դեպք, երկու սեռական ոտնձգություն անչափահաս աղջիկների նկատմամբ: Անչափահասի նկատմամբ սեռական ոտնձգություն մի դեպքում կատարվել է երեխայի պապի կողմից, մյուս դեպքում որպես բռնարար հանդես է եկել 14 տարեկան աղջկա հայրը, որի արդյունքում, ըստ հոգեբանների հետազոտությունների, զոհերի մոտ հոգեբանական վիճակի շեղումներ են նկատվել:

Անձի անձեռնմխելիության իրավունքի դեմ ուղղված ոտնձգությունները կարծում են նաև հետխորհրդային նորաստեղծ պետության կայացման գործընթացի արդյունք է՝ հիմնականում սոցիալ-տնտեսական, հոգեբանական և այլ գործոնների ազդեցությամբ պայմանավորված: Վերջիններիս ուսումնասիրությունը իրավագիտության կողմից ժամանակակից պայմաններում ոչ միայն արդիական է, այլև խիստ անհրաժեշտ, որը տեսական նշանակությունից զատ ունի գործնական նշանակություն և որն էլ իրավագիտության սակավ չուսումնասիրված հիմնահարցերից մեկն է:

Մեր երկրի օրենսդրական համակարգում ամրագրված մարդու իրավունքները սպառնիչ չեն: Օրենսդրորեն չամրագրված իրավունքները և ազատությունները չպետք է մեկնաբանվեն ի վնաս մարդու և քաղաքացու այլ իրավունքների և ազատությունների:

Խնդիրն այն է, որ այօր Հայաստանի Հանրապետությունում անձի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումների և արժանապատվության ոտնահարման դեպքերի ուսումնասիրությունը ընտանիքում բերում է նման եզրահանգման: Մեր երկրում անձի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումները և արժանապատվության ոտնահարման դեպքերը կարգավորվում են քրեական իրավունքի կողմից, սակայն

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ընտանիքում առկա անձի անձեռնմխելիության իրավունքների և արժանապատվության ոտնահարման, իրավունքների սահմանափակման դեպքերը չեն առանձնացվում, դասակարգվում և նկատի ունենալով հանցանքի կատարման վայրը, մասնակիցների կարգավիճակի առանձնահատկությունը և մի շարք այլ առանձնահատուկ հանգամանքներ, քրեական օրենսդրությամբ դրանք բնութագրող առանձին հանցակազմեր նախատեսված չեն:

Հասարակության մեջ տարածված, քննարկվող հարցը վրիպել է օրենսդրի տեսադաշտից և անթույլատրելի է ընտանիքում տեղ գտած անձի անձեռնմխելիության իրավունքի խախտման դեպքերը հավասարեցնել այլ հանցակազմերով նախատեսված հանցագործությունների հետ: Օրենսդրական դաշտի նշված բացը իր սուր ծայրով ուղղված է ընտանիքի և հասարակության դեմ:

Հայաստանի Հանրապետության ընտանիքներում առկա անձի իրավունքները սահմանափակող դեպքերն օրենսդրական դաշտ տեղափոխելիս, պետք է պահպանվեն մարդու և քաղաքացու Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, դրանց թույլատրելի սահմանափակումների շրջանակները, հիմքերը և չափորոշիչները⁹ որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտություն, քանի որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է..», իսկ քաղաքակիրթ, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն կառուցելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ ընտանիքի անդամների վիճակը բարելավելու, երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական և հոգևոր կյանքին նրանց լիակատար և իրավահավասար մասնակցությունն ապահովվելու ուղղությամբ:

⁹ Մարդու իրավունքների սահմանափակման չափանիշները սահմանադրական արդարադատության պրակտիկայում (միջազգային խորհրդածողովի նյութերի համառոտ ամփոփում), Երևան 2005 թ., էջ 3-66:



ԵՐԻՏԱՍԱՐԳ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲՈՆ

Նարինե ՍՈԼՈՄՈՆՅԱՆ

ՀՀ ՄԳ աշխարհակազմի իրավախորհրդարվական ծառայության փորձագիտական-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ

ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԻԻ, ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անձի իրավական կարգավիճակը փոփոխության է ենթարկվում՝ կապված հասարակության զարգացման նոր փուլ թեւակոխելու հետ եւ ձեռք է բերում կոնկրետ, այդ ժամանակին բնորոշ հատկանիշներ ու առանձնահատկություններ: Անձի իրավական կարգավիճակն այն կարեւոր իրավաբանական կատեգորիաներից է, որն անբաժանելիորեն կապված է հասարակության սոցիալական կառուցվածքի, ժողովրդավարության աստիճանի, օրինականության վիճակի հետ¹:

Հարկ է նկատել, որ «իրավական կարգավիճակ» կատեգորիան գիտության մեջ համեմատաբար նոր հասկացություն է: Մինչեւ 60-ականներն այն նույնացվում էր «իրավունակության» հետ եւ չէր դիտարկվում որպես առանձին հասկացություն՝ պատճառաբանվելով, որ անձի մոտ այդ երկուսն էլ ծագում եւ դադարում էին միաժամանակ, երկուսն էլ հավասարաչափ անօտարելի էին: Հատկապես այդ հատկանիշով էին այս երկու կատեգորիաները նույնացվում:

Մեր կարծիքով, այս մոտեցումը ճիշտ չէր եւ այդ պատճառով էլ հետագայում կորցրել է իր իմաստն ու արդիականությունը, որովհետեւ իրավական կարգավիճակի փոփոխությունից անձը չի դադարում իրավունքի սուբյեկտ լինելուց, մինչդեռ, իրավունակության փոփոխման դեպքում, անձը դադարում է իրավասուբյեկտ լինելուց: Կարծում ենք, որ իրավունակությունն ու իրավական կարգավիճակը տարբեր հասկացություններ եւ իրավական կատեգորիաներ են: Անշուշտ, իրավական կարգավիճակը հիմն-

¹ Տե՛ս՝ «Права Человека». /Отв. Ред.Е.А. Лукашева. – М., 2001. էջ 91.

ՎԵՐԼՈՒՃԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

վում է իրավունակության վրա, բայց այն չի կարող հավասարեցվել իրավունակության հետ, քանզի այն ավելի լայն հասկացություն է, կառուցվածքային առումով ավելի բարդ է հանդես է գալիս որպես ընդհանրացնող, համալիր հասկացություն:

Միայն 70-80-ական թվականներին «իրավական կարգավիճակ» կատեգորիան բավականաչափ մշակվեց եւ ձեւավորվեց որպես հիմնախնդիր եւ դարձավ իրավագիտության առանցքային հասկացություններից մեկը:

Տարբեր իրավագետների կողմից իրավական կարգավիճակի վերաբերյալ տրվել են բազմաթիվ սահմանումներ, որոնք մեծամասամբ պայմանավորված էին դրա կառուցվածքային տարրերով:

Իրավունքի այս կամ այն սուբյեկտի իրավական կարգավիճակը որոշվում է իրավունքների եւ պարտավորությունների ամբողջությամբ, որոնք ամրագրվում են օրենսդրորեն: *Մարդու (քաղաքացու) իրավական կարգավիճակը* կազմում են Սահմանադրությամբ ճանաչված եւ երաշխավորված նրա հիմնարար իրավունքներն ու ազատությունները²:

Անձի իրավական կարգավիճակը՝ մարդու իրական եւ իրավաբանորեն ամրագրված վիճակն է՝ պետության եւ այլ սուբյեկտների հետ փոխհարաբերություններում³:

Անձի իրավական կարգավիճակը բնութագրվում է նաեւ որպես պետության կողմից օրենսդրական կարգով երաշխավորված եւ ճանաչված իրավունքների, ազատությունների եւ պարտականությունների, ինչպես նաեւ մարդու օրինական շահերի համակարգ⁴: Մինչդեռ, նույն հեղինակի կողմից, «իրավական կարգավիճակ» հասկացությունը բնորոշվում է որպես իրավունքի նորմերով սահմանված նրա սուբյեկտների վիճակը, նրանց իրավունքների եւ պարտականությունների ամբողջություն: Այսինքն՝ երկրորդ բնորոշումը «օրինական շահեր»-ը չի ներառում, համարելով այն միայն մարդու իրավական կարգավիճակի կառուցվածքային պարտադիր տարր⁵:

Համադրելով իրավական կարգավիճակի վերաբերյալ տարբեր իրավագետների տրված սահմանումները, հարկ է նշել, որ *անձի իրավական կարգավիճակը* բնորոշող ընդհանրական հատկանիշներն են.

- անձի օրենսդրորեն ճանաչված իրավունքների ու ազատությունների, պարտավորությունների եւ օրինական շահերի ամբողջությունը,
- անձի իրավաբանորեն ամրագրված վիճակը պետության հետ փոխհարաբերություններում:

² Տես՝ Գ.Գ. Բարսեղյան, Մ.Վ. Բաղալյան. «Конституционное право: Энциклопедический словарь». – М.: Норма, 2006г. էջ 465

³ *Ափյան Ն. Ա.*: «Անձի իրավաբանական կարգավիճակը՝ ժողովրդավարության հիմք»։ «Конституционное правосудие» N 2(20) 2003.

⁴ «Большой юридический словарь»/Под ред. А.Я. Сухарева, В.Д. Зорькина, В.Е. Крутских. – М.: ИНФРА – М. 1998.

⁵ Նույն տեղում, *Ա.Я. Сухарева*. էջ 655:

Անդրադառնանք իրավական, սահմանադրական եւ սահմանադրաիրավական կարգավիճակների իրավաբանական կառուցվածքների բաղկացուցիչ տարրերին: Անձի իրավական կարգավիճակի վերաբերյալ սահմանադրական իրավունքի գիտության մեջ ձեւավորվել է նրա կառուցվածքի եւ կառուցվածքային տարրերի կազմի վերաբերյալ որոշ մոտեցումներ: Ընդ որում, կարելի է առանձնացնել *երկու հիմնական մոտեցում*⁶՝ անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրերի կազմի սահմանման վերաբերյալ:

Առաջին մոտեցումը հիմնված է անձի իրավական կարգավիճակի հասկացության մեջ երկու տարրերի ընդգրկման վրա՝ իրավունքների եւ պարտականությունների: Միաժամանակ նշվում է, որ լրացուցիչ տարրերը հարկ է համարել որպես իրավական կարգավիճակի նախադրյալներ՝ «նախակարգավիճակային» տարրեր (ընդհանուր իրավասութեկտություն), կամ «հետկարգավիճակային» տարրեր՝ տարրեր, որոնք երկրորդական են առաջնայինի համեմատ (օրինակ, իրավաբանական պատասխանատվությունը երկրորդական է պարտավորությունների համեմատ), կամ ընդհանրապես կատեգորիաներ, որոնք դուրս են իրավական կարգավիճակի (երաշխիքների) շրջանակներից: Լրացուցիչ, «նախակարգավիճակային» եւ «հետկարգավիճակային» տարրերը առաջարկվում է ներառել *«անձի իրավական վիճակ»* հասկացության մեջ: Այնհայտ է, որ մնան մոտեցումը նաեւ հիմնված է «իրավական կարգավիճակ» (նեղ կատեգորիա է) եւ «իրավական վիճակ» (լայն կատեգորիա է, որը ներառում է առաջինը) հասկացությունների տարբերության վրա:

Նման մոտեցման հետետղական ներկայացուցիչներից՝ Լ.Գ. Վեվոդինը, որը նշում էր, որ անձի իրավական կարգավիճակի կառուցվածքի սահմանման համար անհրաժեշտ է ընտրել «գիտական հստակության որոշակի աստիճանով» համապատասխան չափորոշիչ: Նման չափորոշիչ, նրա կարծիքով. «հանդիսանում է իրավունքով ամրագրված անհատի տեղը հասարակությունում եւ պետությունում, այսինքն, նրա մասնակցությունը պետական, հասարակական գործերին եւ հոգեւոր կյանքում»⁶: Առաջնորդվելով այդ չափորոշիչով, նա նշում է անձի իրավական վիճակի բաղկացուցիչ տարրերը. քաղաքացիությունը որպես անձի իրավական վիճակի «ձեւավորման ելակետային սկիզբ», իրավասութեկտությունը կամ «ընդհանուր իրավունակությունը», անձի իրավական վիճակի սկզբունքները, մարդու եւ քաղաքացու սահմանադրական (հիմնական) իրավունքներն ու ազատությունները, որոնք «կենտրոնական տեղ» են զբաղեցնում անձի իրավական վիճակի հիմքերի բովանդակության մեջ, իրավաբանական պարտավորությունները, իրավաբանական երաշխիքները կամ սահմա-

⁶ Ситу' Воеводин Л.Д. "Юридический статус личности в России". Учебн. пособие. - М., 1997. էջ 32.

ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

նադրությամբ եւ օրենքներով նախատեսված անձի իրավունքների եւ պարտականությունների իրացման պայմաններն ու միջոցները⁷:

Ակնհայտ է, որ այս մոտեցումը որպէս անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարր, *inter alia*, դիտարկում է միայն քաղաքացիությունը, մինչդեռ երկքաղաքացիությունը՝ ոչ:

Երկրորդ մոտեցումը բավականաչափ մշակված էր Ն.Վ. Վիտրուկի կողմից՝ իրավաբանական կառուցվածքը իր մեջ ներառում է հետեւյալ տարրերը. 1) իրավաբանական իրավունքներն ու ազատությունները, 2) իրավաբանական պարտականությունները, 3) օրինական շահերը (շահերը, որոնք ուղղակի ամրագրում չեն ստացել իրավունքներում եւ պարտավորություններում, բայց ենթակա են պետության կողմից իրավական պաշտպանության)⁸, 4) քաղաքացիությունը, 5) իրավասուբյեկտությունը, 6) իրավական սկզբունքները եւ 7) իրավաբանական երաշխիքները⁹: Ընդ որում, իրավական կարգավիճակի երաշխիքների շարքում իրավաբանական պատասխանատվությունը հատուկ տեղ է զբաղեցնում¹⁰: Օրինակ, Ն.Ի. Մատուզովը դրանց է դասում նաեւ տվյալ կարգավիճակը սահմանող իրավական նորմերը, իրավահարաբերությունները: Երբեմն այդ տարրերին են դասում նաեւ իրավական պարտքը, օրինականությունը, իրավակարգը, իրավագիտակցությունը, մարդասիրությունը, արդարությունը:

Մեր կարծիքով, որքան էլ այս արժեքներն ու հասկացությունները առանցքային նշանակություն ունեն ինչպէս առանձին անձի, այնպէս էլ հասարակության ու պետության համար, այնուամենայնիվ, դրանց ներառումը իրավական կարգավիճակի կառուցվածքի մեջ հիմնավորված չէ, քանզի վերջիններս կարող են լինել կարգավիճակի նախադրյալ, հատկանիշ, սկզբունք, բայց ոչ առանձին տարր: Մյուս տեսանկյունից էլ, հարկ է նկատել, որ այդ տարրերի ընդգրկումը իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրերի մեջ արտահայտում է հասարակական ու պետական փոխհարաբերությունների զարգացումների ընթացքն ու բնույթը: Գտնում ենք նաեւ, որ հիմնավորված չէ այդ կառուցվածքային տարրերի կազմի սահմանափակումը: Օրինակ, Ա.Գ. Երիցյանի կողմից առաջարկվում է անձի իրավական կարգավիճակը դիտել որպէս իրավունքների, ազատությունների եւ իրավասուբյեկտության համակցություն¹¹՝ չներառելով այդ

⁷ Տես՝ նույն տեղում: *Воеводин А.Д.* էջ 30-38.

⁸ Օրինական շահերը չի կարելի առանձնացնել որպէս իրավական կարգավիճակի ինքնուրույն տարր: Շահը նախորդում է իրավունքներին եւ պարտականություններին, անկախ նրանից այն օրենսդրական ամրագրում ստացել է, թե ոչ: Այն հանդիսանում է «ոչ իրավական» կամ «մինչիրավական» կատեգորիա եւ ամրագրվում է ոչ միայն իրավական, այլեւ ընդհանուր սկզբունքներում: Տես՝ *Лукашева Е.А.* «Права Человека. Учебник для ВУЗ-ов». 1999. էջ 92-93.

⁹ *Витрук Н.В.* «Основы теории правового положения личности в социалистическом обществе». М., 1979 էջ 27-34.

¹⁰ *Витрук Н.В.* «Правовой статус личности в СССР». М., 1985. Матузов Н.И. «Право и личность»// *Общая теория права. Курс лекций.* Нижний Новгород, 1993. Кучинский В.А. «Личность, свобода, право». М., 1978. էջ 115.

¹¹ Տես՝ *Ерицян А.Г.* «Права и свободы человека и гражданина в демократическом государстве: система, институты, юридический механизм реализации и защиты». М. 1998г. էջ 98.

կառուցվածքում քաղաքացիությունը, սակայն, քաղաքացիությունը, մեր կարծիքով, անձի իրավական կարգավիճակի կառուցվածքի մեջ չընդգրկելը, այնքան էլ ճիշտ չէ, քանզի քաղաքացիության ինստիտուտը անձի իրավակարգավիճակի հիմնական տարրն է¹²: Ընդունելի է Գ.Վ. Մալցեվի այն տեսակետը, որ կարգավիճակի առանցքը կազմում են իրավունքներն ու պարտականությունները¹³: Հնարավոր է, որ Ա.Գ.Երիցյանն էլ է առաջնորդվել այդ մոտեցմամբ եւ քաղաքացիության իրավունքը դիտել որպես իրավունք եւ ներառել կարգավիճակի կառուցվածքում որպես իրավունք (որոշ երկրների օրենքներում օգտագործվում է նման ձեւակերպում՝ քաղաքացիություն ունենալու իրավունք) եւ այդ պատճառով էլ բուն քաղաքացիությունը չի դիտարկել կարգավիճակի կառուցվածքում: Սակայն քաղաքացիությունը պետք է դիտարկել որպես պետության հետ կայուն, իրավական կապ, որի ներառումը անձի իրավական կարգավիճակի կառուցվածքում պարտադիր է:

Անձի իրավական կարգավիճակը առավել ընդգրկուն բնորոշելու համար կարելի է բացահայտել քաղաքացիության էությունը¹⁴: Քաղաքացիությունը միշտ էլ պայմանավորված պատմական կոնկրետ ժամանակահատվածով եւ պետաիրավական ու հասարակական հարաբերությունների զարգացմամբ, կրել է այդ փոփոխությունների անմիջական ազդեցությունը եւ դրան համարժեք ուրույն իրավական եւ օրենսդրական ամրագրում է ստացել:

Քաղաքացիությունը, թեւ հանդիսանում է անձի իրավական կարգավիճակի կարեւորագույն հիմք, բայց այն ուսումնասիրության առարկա է դարձել տարբեր տեսանկյունից, որպես պետական ինքնիշխանության բաղկացուցիչ, որպես մարդու սուբյեկտիվ իրավունք, որպես պետության հետ կայուն, իրավական կապ, որպես ինքնություն¹⁵ եւ այլն: Արդի սահմանադրաիրավական իրողությունների արդյունքում ցանկացած պետությունում անձ-պետություն իրավահարաբերությունների ամրագրման առանցքը հանդիսանում է անձի իրավական կարգավիճակը, ի թիվս քաղաքացիության, որպես դրա իրացման կարեւորագույն պայմանի:

Ավելին, արդի սահմանադրաիրավական զարգացումների շրջանակներում ոչ միայն քաղաքացիությունը պետք է դիտարկվի որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարր, այլեւ՝ երկքաղաքացիու-

¹² Ավելին, մենք գտնում ենք, որ եվրոպական սահմանադրաիրավական զարգացումների ասպեկտում որպես անձի իրավական կարգավիճակի տարր կարող է դիտվել Եվրոպական Միության քաղաքացիությունը: Եվրոպական Միության Սահմանադրության ընդունումից հետո եվրաքաղաքացիությունը դառնալու է Եվրոպական Միության քաղաքացու իրավական կարգավիճակի անօտարելի տարր, քանզի ժամանակակից աշխարհը գնալով դեպի միասնական Եվրոպա՝ առանց բաժանարար գծերի, ձգտում է ապահովել այդ քաղաքացիների իրավական կարգավիճակի կայուն նախապայմաններ ողջ եվրոպական մայրցամաքում:

¹³ Տե՛ս՝ *Мальцев Г.В.* "Права личности: юридическая норма и социальная действительность//Конституция СССР и правовое положение личности". М., 1979. էջ50.

¹⁴ *В.Е. Чиркин.* "Сравнительное конституционное право". Уч. пособие/М.:Международные отношения, 2002г. էջ 138.

¹⁵ *Greta Gilbertson.* "Citizenship in a Globalized World". Fordham University, 2006.

ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

թյունը: Երկքաղաքացիության սահմանադրական եւ օրենսդրական ամրագրմամբ այն դարձավ անձի իրավական, սահմանադրական եւ սահմանադրաիրավական կարգավիճակների կառուցվածքային տարր:

Երկքաղաքացիության տրամադրումը, անկախ դրա տրամադրման հիմքերից, փոխում է անձի իրավական կարգավիճակը, քանի որ իրավունքների, ազատությունների եւ պարտականությունների ծավալը, ամբողջությամբ այլ է: Թեեւ պետք է նշել, որ երկքաղաքացիության որոշ դեպքերում (հաշվի առնելով երկքաղաքացիության տարբեր մոդելները) անձի իրավական կարգավիճակը զգալի փոփոխությունների չի ենթարկվում, սակայն այն տարբերվում է քաղաքացու, օտարերկրացու եւ փախստականի կարգավիճակներից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկքաղաքացիությունը կարգավիճակը որոշակիորեն փոխում է անձի կարգավիճակը, փորձ է արվել այն հնարավորին չափ մոտեցնել քաղաքացու կարգավիճակին՝ ողջամիտ սահմանափակումներով: Համերկրացման ակտիվ տեմպերը, միգրացիոն հոսքերը, իրավական, տնտեսական եւ մշակութային արժեքների փոփոխություններն ու դրանց ներդաշնակեցման փորձը հանգեցրեցին տարբեր իրավահամակարգերի եւ իրավակատեգորիաների նկատմամբ նորովի, ավելի ազատական ու հանդուրժողական մոտեցումների եւ լուծումների որոնմանն ու ընդունմանը:

Արժանահիշատակ է այն, որ եթե նախկինում երկքաղաքացիությունը (իհարկե, եթե ճանաչվում էր որպես այդպիսին) ընկալվում էր որպես քաղաքացիության ձեւ (տեսակ), ապա նորովի մոտեցմամբ՝ այն դիտարկվում է որպես առանձին իրավական ինստիտուտ եւ ոչ թե՛ ենթաինստիտուտ: Երկքաղաքացիության, որպես իրավական ինստիտուտի առանձնացումն ունի իր սուբյեկտիվ եւ օբյեկտիվ պատճառները: Երկքաղաքացիությունը միջազգային պայմանագրային կարգավորման առարկա է հանդիսացել դեռեւս 1928 թվականի Բուստամանտեի օրենսգրքով, այնուհետեւ՝ 1930 թվականի Քաղաքացիության մասին օրենքների կոլիզիաներին առնչվող որոշ հարցերի կարգավորման մասին Հաագայի բազմակողմ կոնվենցիայով, Բազմաքաղաքացիության դեպքերի թվի եւ բազմաքաղաքացիության դեպքերում զինապարտության կրճատման մասին 1963 թվականի կոնվենցիայով եւ կից արձանագրություններով, 1997 թվականի Ազգության մասին եվրոպական կոնվենցիայով¹⁶ եւ միջազգային իրավական այլ ակտերով: Երկքաղաքացիության ինստիտուտի առանձնացման կարեւորությունն այն է, որ դրա ներդրումը որոշակի բարդություններ¹⁷ է առաջացնում տվյալ անձանց իրավական կարգավիճակի առումով, որոնց լուծումը

¹⁶ Կարծում ենք, որ 1997թ. Ազգության մասին եվրոպական կոնվենցիայի վավերացումը հրատապ է քաղաքացիության, և մասնավորապես երկքաղաքացիության հիմնահարցերը կարգավորելու տեսանկյունից:

¹⁷ Жухманов М.С. “Двойное гражданство-правовая аномалия”// Дипломатический вестник. 1995. N 7. էջ 51.

տարբերվում է քաղաքացիության ինստիտուտի կարգավորումից եւ պահանջում է նորովի եւ ուրույն մոտեցումներ:

Հատկապես այս մոտեցմամբ՝ երկքաղաքացիությունը որպես առանձին իրավական ինստիտուտ, կարող է նույնպես դիտարկվել որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարր եւ ոչ թե կառուցվածքային ենթատարր: Ուստի, դիտարկենք երկքաղաքացիությունը որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային հիմնական տարրերից մեկը:

Հետազոտելով երկքաղաքացիությունը ճանաչող եւ այն սահմանափակումներով, վերապահումներով ճանաչող պետությունների օրենսդրությունը, հարկ է նշել, որ յուրաքանչյուր պետությունում անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրերի կազմը կարող է տարբեր լինել եւ կախված պետության կողմից երկքաղաքացիության նկատմամբ ընտրված մոդելից¹⁸, անձի իրավական կարգավիճակը կարող է ընդգրկել երկքաղաքացիությունը կամ՝ ոչ:

Անձի իրավական կարգավիճակը՝ պայմանավորված երկքաղաքացիության առկայությամբ, կարող է էապես փոխել նրա վիճակը ավելի քան մեկ պետությունում: Եթե անձի իրավական կարգավիճակի մյուս կառուցվածքային տարրերը ազդում են անձի իրավական կարգավիճակի վրա միայն մեկ պետությունում, ապա երկքաղաքացիության դեպքում՝ երկքաղաքացու իրավական կարգավիճակը կարող է տարբերվել մեկ այլ պետությունում իր իսկ հիմնական իրավական կարգավիճակից:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ երկքաղաքացիության, որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարր ամրագրման դեպքում, պետությունները երկքաղաքացիություն տրամադրելիս առավելապես պետք է առաջնորդվեն արդյունավետ քաղաքացիության սկզբունքով, որը ոչ միայն ուղղված կլինի անձի իրավական կարգավիճակի բարելավմանը, այլև իրավաչափ լուծում կտրվի երկքաղաքացիների իրավական կարգավիճակի հետ կապված հիմնահարցերին:

¹⁸ Հիմնականում, պետությունները, երկքաղաքացիության իրավական կարգավորման հարցերում առաջնորդվում են հիշատակված միջազգային պայմանագրերով եւ երկկողմ համաձայնագրերով: Համաձայն երկքաղաքացիության վերաբերյալ գոյություն ունեցող մոդելների, պետությունները այս հարցում բաժանվում են երեք խմբի.

- պետություններ, որոնք ամբողջությամբ ընդունում են երկքաղաքացիությունը,
- այն պետությունները, որոնք մասամբ են ընդունում, այսինքն, այլ երկրների քաղաքացիներին թույլատրվում է ընդունել իրենց երկրների քաղաքացիությունը, պայմանով, որ այդ երկքաղաքացիները կդիտվեն միայն որպես իրենց քաղաքացիներ: Այս մոտեցումը նաեւ հայտնի է որպես հանդուրժող մոտեցման մոդել (Այդպիսի երկրներ են՝ Բելառուս, Մոլդովա, Ղազախստան, ՌԴ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Բելգիա, Նիդեռլանդներ, Ավստրալիա, ԱՄՆ եւ Թուրքմենստան):
- այն պետությունները, որոնք ընդհանրապես չեն ճանաչում երկքաղաքացիությունը: Սեր կողմից դասակարգվել են եւս երեք խումբ.
- այն պետությունները, որոնք չեզոք են վերաբերում երկքաղաքացիությանը.
- այն պետությունները, որոնք չեն ճանաչում երկքաղաքացիությունը, բայց բացառիկ դեպքերում տրամադրում են այն.
- այն պետությունները, որոնք երկքաղաքացիություն են տրամադրում միայն համաձայնագրի հիման վրա եւ միայն կոնկրետ պետություններին:

ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Երկրադաքացիների իրավական կարգավիճակի հիմքերի վերաբերյալ 1997թ. Կոնվենցիայում ամրագրված է դիրքորոշում, համաձայն որի՝ Կոնվենցիայի անդամ պետությունների իրավասությանն է պատկանում երկրադաքացիության տրամադրման սուբյեկտ հանդիսացող անձանց շրջանակը, այսինքն՝ կոնկրետ պետությանն է թողնված այդ հարցը որոշելու խնդիրը¹⁹: Անձի իրավական կարգավիճակը կարող է վկայել պետության մոտեցումը անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրերի առավել լիբերալ կազմի ընդունման մասին, թե որքանով է պետությունը (կամ պետությունները) պատրաստ ընդլայնելու անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրերը:

Հայաստանի Հանրապետությունը սահմանադրորեն եւ օրենսդրորեն ամրագրելով երկրադաքացիությունը, ամրագրել է այն որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարր: Հետեւապես, անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարրերի կազմը ընդլայնվել է: Հարկ է նշել, որ նման ընդլայնումը կատարվել է հոգուտ յուրաքանչյուրի: Արժանահիշատակ է, որ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև այլ պետություններում, որպես անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային տարր, ամրագրվել է երկրադաքացիությունը: Ավելին, եվրոպական սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում ոչ միայն երկրադաքացիությունը, այլև եվրաքաղաքացիությունը դարձել են անձի իրավական, սահմանադրական եւ սահմանադրաիրավական կարգավիճակների կառուցվածքային առանցքային տարրեր:

Ամփոփելով նշենք, որ անձի իրավական կարգավիճակի հստակ բնորոշումից է կախված անձի իրավական հնարավորությունների իրացման առանձնահատկությունները, տվյալ ժամանակաշրջանի պետական եւ հասարակական հարաբերությունների բազմազանությունն ու դրանց հարաբերակցությունը: Ուստի կարելի է նշել, որ անձի իրավական կարգավիճակը կոնկրետ հասարակարգի արդյունքն է, իսկ դրա կառուցվածքային տարրերի կազմը արտահայտում է գործող իրավական համակարգի վիճակը: Այսինքն, 21-րդ դարի իրավական պետություններին բնորոշ է անձի իրավական կարգավիճակի ժողովրդավարացում, որն ենթադրում է անձի իրավակարգավիճակի կառուցվածքային տարրերի ավելի լայն շրջանակ:

¹⁹ 2007 թվականի փետրվարի 26-ի Քաղաքացիության մասին ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով հաշվի են առնվել այս մոտեցումները:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 նոյեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի նոյեմբերի 28-ին Մինսկում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հումանիտար համագործակցության խորհրդի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ղարիբջանյանի գրավոր բացատրությունները, հետա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(47)2008
23

գրտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հումանիտար համագործակցության խորհրդի մասին համաձայնագիրն ստորագրվել է 2006թ. նոյեմբերի 28-ին Մինսկում՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության կողմից:

Համաձայնագրի նպատակն է զարգացնել փոխադարձ հումանիտար համագործակցությունը: Այն կնքվել է 2005թ. օգոստոսի 26-ի՝ ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության մասին համաձայնագրի հիման վրա (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2006թ. ապրիլի 17-ին), որի 10-րդ հոդվածը նախատեսում է ստեղծել անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հումանիտար համագործակցության խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ հումանիտար ոլորտում աշխատանքները համակարգելու նպատակով:

2. Խորհրդի գործունեությունը կարգավորվում է համաձայնագրի բաղկացուցիչ մասը հանդիսացող Կանոնադրությամբ:

Խորհրդի անդամներ են համաձայնագրի մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչները՝ Խորհրդում հերթով մեկ տարի ժամկետով նախագահելու իրավունքով:

Խորհրդի հիմնական խնդիրներն են մշակույթի, կրթության, գիտության, արխիվային գործի, տեղեկատվության եւ զանգվածային հաղորդակցության, սպորտի, զբոսաշրջության եւ երիտասարդության հետ աշխատանքի բնագավառներում համագործակցության կատարելագործումը, զարգացումը եւ անհատի շնորհների ու ընդունակությունների իրագործման համար ներդաշնակ պայմանների ապահովումը:

Խորհուրդն իրականացնում է հետեւյալ գործառույթները.

- համաձայնագրի մասնակից պետությունների հումանիտար համագործակցության հայեցակարգային եւ գործնական հարցերի քննարկում,
- հումանիտար ոլորտում համագործակցության առաջնային ուղղությունների եւ ձեռքի որոշում, հումանիտար համագործակցության հիմնական ուղղություններով համատեղ գործողությունների համակարգման եւ փոխհամագործակցության ուղղությամբ առաջարկությունների մշակում,
- համաձայնագրի մասնակից պետությունների հումանիտար համագործակցության ոլորտում առաջնային միջպետական միջոցառումների երկամյա ծրագրերի նախապատրաստում,
- հումանիտար համագործակցության ոլորտում միջազգային իրավական փաստաթղթերի նախագծերի մշակում,

- համագործակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների հետ՝ համատեղ միջազգային ծրագրերի, նախագծերի ու միջոցառումների մշակման եւ իրականացման բնագավառներում,

- փոխհամագործակցություն Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի հետ.

- ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի եւ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերին հումանիտար համագործակցության հետագա ամրապնդման եւ զարգացման մասին առաջարկությունների նախապատրաստում:

3. Խորհրդի մասին կանոնադրությամբ մանրամասնված են նաեւ այդ մարմնի աշխատանքների կազմակերպման կարգին ու ֆինանսավորմանը վերաբերող հարաբերությունները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- Խորհրդի իրավասության մեջ մտնող հարցերով վերջինիս տրամադրել տեղեկատվություն՝ այդպիսի պահանջի առկայության դեպքում,

- հոգալ Խորհրդի նիստերի անցկացման ծախսերը, եթե դրանք անցկացվում են ՀՀ տարածքում:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2006 թվականի նոյեմբերի 28-ին Մինսկում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հումանիտար համագործակցության խորհրդի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
13 նոյեմբերի 2007 թվականի
ՍԳՈ-717



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 3568-1 AM ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

20 նոյեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Դուկասյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող), մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի սեպտեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ 3568-1 AM ֆինանսավորման համաձայնագրում (Ռոտզման համակարգերի զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» N 3568-1 AM ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրվել է 2007թ. սեպտեմբերի 19-ին, Երեւանում՝ ոռոգման համակարգերի զարգացման սկզբնական ծրագրին առնչվող միջոցառումների համար լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

2. Համաձայնագիրը սահմանում է այն Ծրագիրը, որի իրականացմանն ուղղվում է վարկավորումը, վարկավորման չափը, վճարման կարգն ու ժամանակացույցը, աշխատանքների իրականացման մեխանիզմներն ու ժամանակացույցը, վերահսկողության իրականացման կարգը, ֆինանսավորման ընթացակարգը, ինչպես նաեւ համաձայնագրի գործողության եւ գործողության դադարման կարգն ու ժամկետները: Համաձայնագրի մասն են կազմում նաեւ երեք ժամանակացույցեր եւ մեկ հավելված:

3. Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավմանը: Ծրագիրը բաղկացած է երկու մասերից՝ սկզբնական եւ լրացուցիչ:

4. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- իրականացնել ամբողջ Ծրագիրը գործող ԾԻԳ-ի (Ծրագրի իրականացման գրասենյակ) միջոցով,

- ապահովել Ծրագրի իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան,

- ապահովել Շրջակա միջավայրի կառավարման ծրագրի համար անհրաժեշտ բոլոր միջոցառումների ժամանակին իրականացումը,

- իրականացնել Ծրագրի աշխատանքների մոնիտորինգ եւ գնահատում, վարել կամ հանձնարարել վարել կառավարման համակարգ,

- սահմանված ժամանակացույցին խստիվ համապատասխան Ընկերակցությանը ներկայացնել միջանկյալ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները,

- հանձնարարել ԶՕԸ-ներին (ջրօգտագործողների ընկերություն) իրենց ֆինանսական հաշվետվությունները կազմել այնպես, որ դրանք արտա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հայտեն իրենց կատարած աշխատանքներն ու ֆինանսական վիճակը, ստուգել այդ հաշվետվությունները,

- համաձայնագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան Ընկերակցությանը վճարել ինչպես ֆինանսավորման չմասհանված գումարի դիմաց պարտավճար, այնպես էլ վարկի մասհանված հաշվեկշռի դիմաց սպասարկման վճար, վերադարձնել վարկի մայր գումարը:

5. Համաձայնագիրը նախատեսում է նաեւ աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգը, մեթոդները, ֆինանսավորման միջոցների մասհանման կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2007 թվականի սեպտեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիջազգային զարգացման ընկերակցության միջեւ 3568-1 AM ֆինանսավորման համաձայնագրում (Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**20 նոյեմբերի 2007 թվականի
ՍԳՈ-718**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՁԵՅՆԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 26-ՐԴ
ԳԼԽԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 նոյեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ քաղաքացի Ա. Չեյնալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արտակ Չեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Չեյնալյանի՝ սահմանադրական դատարանում 17.08.2007թ. մուտքագրված դիմումն է:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ՀՀ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ քաղ. դատ. օր.) ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել է 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից՝ հետագայում ենթարկվելով մի շարք փոփոխությունների:

ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլուխը, որն ընդգրկված է օրենսգրքի երրորդ բաժնի («Առանձին տեսակի գործերով վարույթների առանձնահատկությունները») առաջին ենթաբաժնում («Հատուկ հայցային վարույթներ») եւ վերնագրված է «Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը», բաղկացած է հինգ հոդվածից (159-163 հոդվածներ) եւ նախատեսում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերը դատական կարգով անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու հիմքերը (հոդվ. 159), պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումի էությունը (հոդվ. 160), դիմումին առաջադրվող պահանջները (հոդվ. 161), դատարանի կողմից դիմումի քննության կարգը (հոդվ. 162), դատարանի վճռին ներկայացվող պահանջները (հոդվ. 163):

2. Դիմող կողմը սահմանադրական դատարան ներկայացնելով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 22.01.2007թ. որոշումը, Երեւան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 01.11.2006թ. եւ 29.03.2007թ. որոշումները, ՀՀ վերաքննիչ դատարանի 27.06.2007թ. վճիռը, ՀՀ վճռաբեկ դատարանի 16.06.2006թ., 06.02.2007թ., 13.03.2007թ., 10.04.2007թ. եւ 16.04.2007թ. որոշումները, գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանները մերժել են դատարանների (դատավորների) գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ իր դիմումները՝ պատճառաբանելով, որ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխում նախատեսված նորմերը չեն վերաբերում դատա-

րանների (դատավորների) գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթին, եւ որ քաղ. դատ. օր.-ի հիշյալ գլխի նորմերը՝ ընդհանրապէս, եւ 160 հոդվածը՝ մասնավորապէս, դատական իշխանություն իրականացնող մարմինների վրա չեն տարածվում, հետեւաբար՝ այդօրինակ դիմումները ենթակա չեն դատական քննության: Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին իր 16.04.2007թ. որոշման մեջ արձանագրել է, որ բողոքի ընդունելիության հիմքերը բացակայում են, քանի որ «վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք դատական ակտն օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն չի կարող ունենալ»:

Դիմող կողմը հարցի սահմանադրականությանն առնչվող փաստարկների շրջանակներում գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանների ակտերով գրկվել է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքից:

Դիմողի պնդմամբ՝ «Կոնկրետ գործով դատարան ստեղծվում, ձեւավորվում է պաշտոնատար անձի կամ անձանց՝ «Հայցադիմումը (դիմումը, բողոքը) վարույթ ընդունելու մասին» որոշմամբ: Հետեւաբար, մինչեւ գործը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը (կամ մերժումը) դեռ չկա «օրենքի հիման վրա ստեղծված դատարան», եւ գործ ունենք պաշտոնատար անձի (անձանց) հետ, որը (որոնք) կարող է(են) ...անգործություն ցուցաբերել»: Այդ անգործության պատճառով իրեն տուժած համարող անձը պետք է իրավունք եւ իրական հնարավորություն ունենա օրենսդրությամբ նախատեսված եղանակներով պաշտպանելու իր իրավունքները նման խախտումներից:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում դատավորի անգործության բողոքարկման վերաբերյալ դրույթի բացակայության արդյունքում ստացվում է այնպէս, որ եթե դատարանը չընդունի հայցը, դիմումը կամ բողոքը՝ ոչ թե վարույթ չընդունելու վերաբերյալ որոշում կայացնելու միջոցով, այլ պարզապէս անգործությամբ, ապա ոչինչ անել հնարավոր չէ, քանի որ չկա այն «պոզիտիվ» դատական ակտը, որը կարող էր բողոքարկվել վերադաս ատյանում, եւ դատարանները մերժում են նման հայցը (դիմումը կամ բողոքը)՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատավորի անգործությունը բողոքարկելու դրույթի բացակայության պատճառաբանությամբ: Դիմողը գտնում է, որ այս իրավական դիրքորոշումը նենգափոխում է դատական պաշտպանության եւ արդարադատության մատչելիության իրավունքների էությունը՝ «գրոյացնելով» դրանց բովանդակությունը:

Դիմող կողմն այն տեսակետն ունի, որ սույն դեպքում ոչ թե գործ ունենք օրենքի՝ դատական պրակտիկայի միջոցով հաղթահարելի բացի հետ, այլ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

այնպիսի բացի, որն առաջացնում է դատարաններին ուղղված դիմումների անտեսման, խախտված իրավունքների վերականգնման իրավական պաշտպանության որեւէ միջոցի իսպառ բացառման հակասահմանադրական իրավիճակ:

Դիմողը կարծում է, որ դատարանների վերը շարադրված իրավական դիրքորոշումը խախտում է իշխանությունների հավասարակշռումը, լուրջ բաց առաջացելով իրավական ակտերի դատական վերահսկողության առումով եւ վտանգելով ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես, ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի դրույթներով երաշխավորվում է անձի՝ Սահմանադրության 18 հոդվածով ամրագրված իրավունքի պաշտպանությունը: Ըստ պատասխանող կողմի՝ «ՀՀ քաղ. դատ. օր.-ի 159 հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու կամ նրանց գործողությունը (անգործությունը) վիճարկելու համար հիմք են նշված ակտն օրենքին հակասելը եւ դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված իրավունքի եւ (կամ) ազատության խախտման փաստի առկայությունը»: Կողմը գտնում է նաեւ, որ «...օրենքն օգտագործում է «պետական մարմին» եւ «պաշտոնատար անձ» հասկացությունները՝ դրանով իսկ յուրաքանչյուրին իրավունք վերապահելով վիճարկել ցանկացած պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործողությունը կամ անգործությունը»: Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ օրենսգրքի վիճարկվող գլխում «...դատավորի գործողություններն ու անգործությունը վիճարկելու իրավունքի առանձնացումը ոչնչով արդարացված չէր լինի եւ այդ դեպքում նույնիսկ կարող էր այն թյուր կարծիքը ստեղծվել, որ դատարանը պետական մարմին, իսկ դատավորը՝ պաշտոնատար անձ չէ»:

Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ չի կարելի դատարանի եւ դատավորի գործողությունների ու անգործության յուրաքանչյուր դեպքի բողոքարկումն իրականացնել ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի դրույթների հիման վրա: Մասնավորապես, ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխով սահմանված կարգով բողոքարկման ենթակա չեն.

- դատավորի այն ակտերն ու գործողությունները, որոնց բողոքարկման համար օրենսդրությամբ սահմանված է հատուկ դատավարական կարգ,
- դատարանի միջանկյալ ակտերը, որոնք ընդունվում են գործն ըստ էության

թյան քննելու ընթացքում եւ կարող են բողոքարկվել միայն վերաքննության կամ վճռաբեկության կարգով,

- այն ակտերը, որոնց բողոքարկումը կհանգեցնի «...դատական ատյանների միջեւ ֆունկցիոնալ կապի վերացմանը, աղճատմանը, դատական ակտերի կայունության կորստի»:

Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի՝ հակասահմանադրական ճանաչվելու դեպքում անձինք կգրկվեն պետական այլ մարմինների եւ պաշտոնատար անձանց ակտերն ու գործողությունները (անգործությունը) վիճարկելու, եւ, հետեւաբար՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից:

Պատասխանող կողմը միաժամանակ փաստեց, որ իրավակիրառական պրակտիկայում տեղ է գտել դիմողի իրավունքների խախտում, ինչպես նաեւ առկա է օրենսդրական բաց, որի հաղթահարման ուղղությամբ գործնական քայլեր են արվում:

4. ՀՀ քաղ. դատ. օր.-ի 15 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ «Քաղաքացիական գործեր քննող դատարանը ... քննում է ... քաղաքացու իրավունքները, ազատությունները եւ օրինական շահերը խախտող պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի եւ դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերը»:

ՀՀ քաղ. դատ. օր.-ի 163 հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն՝ պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործով դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի նշում՝ ակտն ամբողջովին կամ մասամբ անվավեր ճանաչելու կամ պահանջի բավարարումն ամբողջովին կամ մասամբ մերժելու մասին, ինչպես նաեւ նշում՝ անվավերության հետեւանքների մասին...:

Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի ակտի անվավերության հիմքերն ամրագրված են նաեւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածում (ըստ նշված օրենքի՝ վարչական վեճերն ըստ էության լուծվում են արտադատական կարգով): Իսկ նույն օրենքի 64 հոդվածում նշված են ակտն անվավեր ճանաչելու հետեւանքները: Նշված հոդվածները վերաբերում են բացառապես վարչական մարմինների կողմից ընդունված ակտերին:

ՀՀ քաղ. դատ. օր.-ի վերոնշյալ դրույթներում «ակտն ամբողջովին կամ մասամբ անվավեր ճանաչելու» եւ «նշում՝ անվավերության հետեւանքների մասին» բառակապակցություններից, ինչպես նաեւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերից

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բխում է, որ քաղ. դատ. օր.-ի 163 հոդվածը, հետեւաբար՝ քաղ. դատ. օր.-ի ամբողջ 26-րդ գլուխը, նվիրված է միայն ոչ արդարադատական գործառույթների իրականացնող մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց գործունեության օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը:

Բացի դրանից, քաղ. դատ. օր.-ի 163 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, երբ քաղաքացու կամ իրավաբանական անձի խախտված իրավունքը չի կարող վերականգնվել միայն պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի՝ օրենքին հակասող ակտն անվավեր ճանաչելու միջոցով, դատարանն իրավունք ունի իր վճռով պարտադրել համապատասխան մարմնին կամ պաշտոնատար անձին՝ ընդունելու քաղաքացու՝ օրենքով երաշխավորվող իրավունքները եւ (կամ) ազատությունները վերականգնող ակտ»: Ակնհայտ է, որ նման կարգավորումը կարող է վերաբերել միայն վարչական, այլ ոչ թե դատական ակտերին:

ՀՀ դատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս նաեւ, որ **գործն ըստ էության լուծող** դատական ակտերը ենթակա են դատական վերահսկողության դատավարական օրենսդրությամբ սահմանված հատուկ կարգով, կոնկրետ դեպքում՝ քաղ. դատ. օր.-ի չորրորդ («Վարույթը վերաքննիչ դատարանում») եւ հինգերորդ («Վարույթը վճռաբեկ դատարանում») բաժինների կանոններով:

Ինչ վերաբերում է միջանկյալ դատական ակտերին, ապա օրենսդիրը հստակեցրել է այն ակտերի շրջանակը, որոնք ենթակա են բողոքարկման: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ բողոքարկման ենթակա են միայն հետեւյալ՝ **գործն ըստ էության չլուծող (միջանկյալ)** դատական ակտերը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 91 հոդված), հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 92 հոդված), հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 104 հոդված), գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 108 հոդված), դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 115 հոդված), լրացուցիչ վճռի կայացումը մերժելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 142 հոդված), վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները եւ թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 143 հոդված), վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը (քաղ. դատ. օր.-ի 212 հոդված (այս որոշման բողոքարկելիությունը սահմանվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004թ. ընդունված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքով)): Դա-

տարանների կողմից կայացվող մյուս՝ միջանկյալ դատական ակտերը (գործը դռնփակ նիստում քննության առնելու, բացարկի կամ ինքնաբացարկի ընդունման կամ մերժման, վկային հարկադիր բերման ենթարկելու, ապացույցներ պահանջելու եւ ապահովելու, փորձաքննություն եւ փորձագետ նշանակելու, դատական հանձնարարության, բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ չվերականգնելու, գործն այլ դատարանի քննության փոխանցելու, գործերը միացնելու կամ առանձնացնելու, գույքի հետախուզում հայտարարելու, հայցի ապահովման միջոց կիրառելու կամ այն վերացնելու, արագացված դատաքննություն կիրառելու, նիստը հետաձգելու, արձանագրության վերաբերյալ դիտողություններն ընդունելու կամ մերժելու մասին որոշումները) բողոքարկման ենթակա չեն:

Հարկ է նշել նաեւ քաղ. դատ. օր.-ի այն դրույթները, որոնց համաձայն՝ առաջին ատյանի դատարանի որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ կարգով միայն ՀՀ քաղ. դատ. օր.-ով եւ այլ օրենքներով նախատեսված դեպքերում (քաղ. դատ. օր.-ի 221 հոդվածի 1-ին մաս) եւ առաջին ատյանի դատարանների եւ տնտեսական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եւ վերաքննիչ, տնտեսական դատարանների՝ օրինական ուժի մեջ չմտած որոշումները կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով միայն քաղ. դատ. օր.-ով եւ այլ օրենքներով նախատեսված դեպքերում (քաղ. դատ. օր.-ի 222 հոդվածի 2-րդ մաս):

Դատարանի վերոհիշյալ՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բնույթի վերլուծությունից հետեւում է, որ օրենսդիրը հիմնականում բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին որոշումները: Բողոքարկման ոչ ենթակա վերոհիշյալ ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը եւ վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը:

Օրենսդրի կողմից առանձին դատական ակտերի բողոքարկման հնարավորության բացառումը բխում է դատավարությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու անհրաժեշտությունից, քանի որ դատարաններում քաղաքացիական դատավարության կարգով գործերի քննության համար օրենքը սահմանում է հստակ ժամկետներ: Փաստորեն, օրենսդիրը, յուրաքանչյուր կոնկրետ դատական ակտի կապակցությամբ, առաջնորդվելով արդարադատության շահերից բխող որոշակի նպատակներով եւ խնդիրներով, սահմանում է այս կամ այն դատական ակտի բողոքարկելիությունը: Ուստի ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի նորմերի գործողության մեխա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նիկական տարածումը դատական ակտերի վրա՝ կարող է հանգեցնել արդարադատության շահերին հակասող իրավիճակների առաջացման, ինչը կհակասի քաղաքացիական դատավարության օրենսդրության ողջ տրամաբանությանը:

Դատական ակտերի, դատարանների եւ դրանց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) նկատմամբ բողոքարկման այն նույն կարգի կիրառումը, որը գործում է այլ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերը վիճարկելու համար, կդանդադեցնի դատական քննության գործընթացը՝ դրանով ստեղծելով դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու՝ արդարադատության իրականացման երաշխիքի խախտման վտանգ: Դատական իշխանության ներսում դատարանների եւ դրանց պաշտոնատար անձանց ակտերի բողոքարկումը պետք է իրականացվի հատուկ դատավարական կարգով՝ այն հաշվով, որ վերջինս չխոչընդոտի դատաքննության բնականոն ընթացքը, չվտանգի դրա արդյունավետությունը:

Հաշվի առնելով պետական իշխանության համակարգում գործադիր եւ դատական մարմինների դերը եւ նշանակությունը, արդարադատության եւ կառավարման գործառույթների էությունը, դրանց առանձնահատկությունները, չի կարող իրավակարգավորման միեւնույն ձեւը կիրառվել դատական իշխանության կողմից ներհամակարգային վերահսկողության եւ գործադիր մարմինների գործունեության դատական վերահսկողության պարագաներում:

5. Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, եւ արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս առյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը: Գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկվում են վերաքննության եւ վճռաբեկության կարգով՝ քաղ. դատ. օր.-ի 4-րդ եւ 5-րդ բաժինների կանոնների հիման վրա: Ինչ վերաբերում է գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատական ակտերի բողոքարկման կարգի կապակցությամբ կատարված փոփոխությունները եւս էլնում են նշված տրամաբանությունից եւ միտված են նրան, որ ապահովվի դատարանների եւ դրանց պաշտոնատար անձանց ակտերի դեմ բերված բողոքների կուլեգիալ կարգով քննությունը, ինչը կստեղծի արդյունավետության եւ օբյեկտիվության լրացուցիչ երաշխիք: Այսպես. ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004թ. ընդունված՝ ՀՀ քաղաքացիական դատավա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

րության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքը սահմանում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման բողոքարկելիությունը՝ ամրագրելով, որ այդ որոշումը ենթակա է բողոքարկման վճռաբեկության կարգով: 21.02.2007թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված եւ 07.04.2007թ. ուժի մեջ մտած՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվում է դատարանների առանձին որոշումների բողոքարկման նոր կարգ, որի համաձայն՝ մասնավորապես, տնտեսական դատարանի որոշումների դեմ բերված բողոքները տնտեսական դատարանում պետք է քննվեն կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումները ենթակա են բողոքարկման վերաքննիչ դատարան: Նույն տրամաբանությունն է արտահայտված նաեւ ՀՀ դատական օրենսգրքում:

ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի դրույթների ամբողջական տարածումը դատարանների եւ դրանց պաշտոնատար անձանց ակտերի վիճարկման վրա՝ կիսախտի վերոհիշյալ տրամաբանությունը, ինչի արդյունքում կստեղծվի առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից, այսինքն՝ հավասար կամ ցածր պետաիշխանական մակարդակի վրա գտնվող դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ վերադաս ատյանի դատարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբերյալ դիմումները քննության առնելու հնարավորություն: Ընդ որում, նման մոտեցման դեպքում հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ կոլեգիալ կազմով կայացված դատական ակտը կարող է միանձնյա դատական քննության առարկա դառնալ: Մինչդեռ քաղաքացիական դատավարական օրենսդրության զարգացումներն ընթանում են այն ուղղությամբ, որ ապահովեն դատական ակտերի դեմ բերված բողոքների կոլեգիալ քննությունը:

Ուստի դատարանների եւ դրանց պաշտոնատար անձանց ակտերի բողոքարկումը կարող է տեղի ունենալ միայն օրենսդրությամբ սահմանված հատուկ դատավարական կարգով:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այն-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես եւ բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս):

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն եւ մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից եւ պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ եւ պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որեւէ հայեցողություն չունի օրենքին համապատաս-

խանոդ դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ եւ քննվի անվերապահորեն եւ առանց որեւէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում եւս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու եւ երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

7. Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նաեւ այն փաստի վրա, որ մինչեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 18.02.2004թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի ուժի մեջ մտնելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (ոչ 26-րդ գլխում) նախատեսում էր այնպիսի կարգավորում, որով փորձ էր արվել բացառել դատարանի (դատավորի) անգործության հետեւանքով հայցադիմումը չընդունելը: Այդ կարգավորումը, մասնավորապես, կայանում էր հետեւյալում. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նախկին խմբագրությամբ 91 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում չկայացվելու դեպքում **հայցադիմումը համարվում էր ընդունված**: Այսինքն՝ եթե դատավորը, անգործություն դրսեւորելով, օրենքով սահմանված եռօրյա ժամկետում չէր կայացնում ո՛չ հայցադիմումն ընդունելու, ո՛չ հայցադիմումը վերադարձնելու եւ ո՛չ էլ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում, ապա օրենքի ուժով հայցադիմումը համարվում էր ընդունված:

Վերոհիշյալ կարգավորումը, սակայն, փոփոխության է ենթարկվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 18.02.2004թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով, որի 6-րդ հոդվածով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ 91 հոդվածի 2-րդ կետը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ. «Դատարանը, սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, հայցադիմումի ընդունումը մերժելու

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մասին կայացնում է որոշում՝ հայցադիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում որոշումը, հայցադիմումը եւ դրան կից փաստաթղթերը պատշաճ ձևով ուղարկելով հայցվորին»։ Ներկայիս խմբագրությամբ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում բացակայում է վերոհիշյալ այն կարգավորումը, որը բացառում էր դատարանի մատչելիության իրավունքի խախտումն այն դեպքերում, երբ դատավորն օրենքով սահմանված ժամկետում չէր կայացնի հայցադիմումն ընդունելու, ընդունումը մերժելու կամ վերադարձնելու մասին որոշում։ Սակայն այդպիսի իրավական կարգավորումը նույնպես խնդրի վերջնական լուծում չէր, քանի որ կարող էր անգործություն ի հայտ գալ նաեւ հայցադիմումը քննության ընդունելուց հետո։ Այսուհանդերձ, վերոհիշյալ փոփոխությունից հետո ձեւավորվել է այնպիսի իրավակիրառական պրակտիկա, որը, ըստ գործի նյութերի եւ կողմերի դիրքորոշումների, վկայում է քաղաքացու սահմանադրական իրավունքի փաստացի խախտման, ինչպես նաեւ պատճառված վնասի փոխհատուցման արդյունավետ մեխանիզմների բացակայության մասին։

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 եւ մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության եւ արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 եւ այլ հոդվածներով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաեւ ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարեւորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջեւ։ Միաժամանակ, կարեւորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության եւ, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում։

Նկատի ունենալով, որ դատական իշխանության համակարգում արդարադատական գործընթացի բոլոր փուլերն օրենքով կանոնակարգված են, որոշակիացված են բողոքարկման ընթացակարգերը, նախատեսված են դատական իշխանության բնականոն գործունեության որոշակի երաշխիք-

ներ, այսուհանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական իշխանության պաշտոնատար անձանց անգործության վերացման արդյունավետ ձևերի հարցն օրենսդրական լրացուցիչ կանոնակարգման խնդիր ունի:

ՀՀ դատական օրենսգրքի 89, 90 հոդվածներով սահմանված են դատավորի պաշտոն զբաղեցնող անձանց պարտադիր վարքագծի կանոնները: Նույն օրենսգրքի մի շարք այլ հոդվածների համաձայն ընդհանուր իրավասության, քաղաքացիական, քրեական, վարչական, վերաքննիչ դատարանների նախագահների, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի անմիջական պարտականությունն այդ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելը եւ դատավորի կողմից նրա անմիջական պարտականությունների կատարմանը հետետելն է (25, 30, 34, 38, 49 եւ 61 հոդվածներ), ընդ որում, դատարանների նախագահների այդ պարտականության ոչ պատշաճ իրականացումը նույն օրենսգրքի 165 հոդվածի 1-ին մասի համաձայն նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական վերջին զարգացումները մասնակիորեն են լուծում քննության առարկա խնդիրը (հանձին նաեւ կարգապահական վարույթի ինստիտուտի (համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 155 հոդվածի)): Բացի դրանից, դատարանի բնականոն գործունեության ապահովման տեսակետից օրենքը որոշակի պարտավորություններ է դնում նաեւ դատարանների նախագահների խորհրդի վրա (մասնավորապես, ՀՀ դատական օրենսգիրք, հոդվ. 72): Այսուհանդերձ, հաշվի առնելով նաեւ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, ելնելով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 91 հոդվածի 2-րդ կետի իմպերատիվ պահանջից՝ հայցադիմումն ստանալու պահից դրա մերժման վերաբերյալ եռօրյա ժամկետում որոշում կայացնելու վերաբերյալ, ինչպես նաեւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական իշխանության մարմիններում անգործության պարագան անձի արդարադատության մատչելիության իրավունքի սահմանափակման պատճառ է դառնում, սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ. ՀՀ վճռաբեկ դատարանը կարող էր, օրենսդրության տարակերպ ընկալման ու մեկնաբանման պայմաններում, երաշխավորել մարդու արդարադատության մատչելիության իրավունքը՝ օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու միջոցով: Սակայն խնդիրը միայն օրենքի մեկնաբանման ճանապարհով արդյունավետ չի կարող լուծվել: ՀՀ Ազգային ժողովն առավել հստակ պետք է սահմանի դատարանների, նրանց պաշտոնատար անձանց անգործության հետեւանքով անձի խախտված իրավունքները դատավարական ողջամիտ ժամկետում վերականգնելու եւ պատճառված վնասը փոխհատուցելու

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

արդյունավետ ընթացակարգեր, որոնց բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել նաեւ արդարադատության մատչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների, այնպես էլ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի իմաստից: Իսկ այդ խնդիրը դուրս է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 26-րդ գլխի գործող նորմերի իրավակարգավորման շրջանակներից:

8. Ինչ վերաբերում է վնասի փոխհատուցման վերաբերյալ դիմողի պահանջին, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ հարցի լուծումը դուրս է սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակներից եւ վերապահված է ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասով նախատեսված դատարաններին: ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված **օրենքի դրույթի սահմանադրականությունը**: Դրանով սահմանափակված է անհատական դիմումների շրջանակը: Իսկ ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի պահանջն է, որ «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Միաժամանակ, սահմանադրական դատարանն օրենքի սահմանադրականության հարցը, ըստ Սահմանադրության 100 հոդվածի, լուծում է օրենքով սահմանված կարգով: Իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 8-րդ մասի համաձայն սահմանադրական դատարանն օրենքի սահմանադրականության հարցի քննության արդյունքով կարող է ընդունել հետեւյալ որոշումներից մեկը.

- 1) վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.
 - 2) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին:
- Այլ որոշում սահմանադրական դատարանն իրավասու չէ ընդունելու:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հան-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

րապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 նոյեմբերի 2007 թվականի
ՍԳՈ-719**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 419 ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԴ
ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 դեկտեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ քաղ. Է. Կարապետյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Ա. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Էմմա Կարապետյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. է. Կարապետյանի՝ 29.08.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 419 հոդվածը փոփոխվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հուլիսի 7-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածը վերնագրված է «Բողոքը քննող դատարանի որոշումները», որը 2006 թվականի հուլիսի 7-ի խմբագրությամբ սահմանում է.

«Դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանների կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտերը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված են, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է լրացուցիչ նախաքննության կամ համապատասխան ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ.

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը եւ հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) բեկանում եւ փոփոխում է ստորադաս դատարանի դատական ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս նման փոփոխության, եւ դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) կարճում է գործի վարույթը եւ դադարեցնում քրեական հետապն-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դումն ամբողջությամբ կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջությամբ կամ դրա մի մասը, եթե գործի վարույթը կարճելու կամ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու հիմքերն ի հայտ են եկել ստորադաս դատարանում գործի քննության ժամանակ.

6) վերաքննիչ դատարանի դատական ակտը վերանայելիս օրինական ուժ է տալիս առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի դատական ակտերից որեւէ մեկին»:

2. Դիմողը դիմումին կից ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացրել Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 26.03.2007թ., ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 14.05.2007թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 13.07.2007թ. որոշումները:

Վերոհիշյալ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանն իր 26.03.2007թ. որոշմամբ մերժել է քաղ. Է. Կարապետյանի` ՀՀ գլխավոր դատախազության անգործության դեմ բերված բողոքը, իսկ որոշման եզրափակիչ մասում ամրագրել է, որ տվյալ որոշումը ենթակա չէ բողոքարկման: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը, քննության առնելով քաղ. Է. Կարապետյանի վերաքննիչ բողոքը, իր 14.05.2007թ. որոշմամբ բավարարել է այն եւ բեկանել Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 26.03.2007թ. որոշումը: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված վճռաբեկ բողոքը, իր 13.07.2007թ. որոշմամբ անհիմն համարելով բողոքատուի այն փաստարկը, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 278 հոդվածով նախատեսված` հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումները չեն կարող բողոքարկվել վերաքննիչ դատարան, բայցեւայնպես, հիմնավոր համարելով առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումը, կիրառելով ՀՀ քր. դատ. օր.-ի 419 հոդվածի 6-րդ կետը` բեկանել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 14.05.2007թ. որոշումը եւ օրինական ուժ է տվել Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր գործով կիրառելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետը` իրեն զրկել է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի հիմքերով իր խախտված իրավունքները դատական կարգով վերականգնելու հնարավորությունից, խախտել է Սահմանադրության 19 հոդվածով նախատեսված իր սահմանադրական իրավունքը, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

419 հոդվածի 6-րդ կետով սահմանված դրույթն անհրաժեշտ է ճանաչել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Պատասխանողը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով երաշխավորված՝ յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքները վերականգնելու համար հավասարության պայմաններում անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր գործով դատարանի կողմից համապատասխան դատավարական փաստաթղթում իր դիրքորոշման արտահայտում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով վճռաբեկ դատարանի կողմից կայացվող որոշումների տեսակների սահմանումը պայմանավորված է ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով, ներհամակարգային գործառութային տարանջատման սկզբունքի վրա հիմնված դատական համակարգում վճռաբեկ դատարանի դերով եւ նշանակությամբ, իր կարգավիճակից բխող լիազորությունների առանձնահատկությամբ:

Ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետում եւ ՀՀ դատական օրենսգրքի 60 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում ամրագրված՝ վճռաբեկ դատարանի եզրափակիչ որոշման նոր տեսակը ոչ միայն չի հակասում ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին, այլ, ընդհակառակը, այն կարելի է դիտել որպես նշված հոդվածում ամրագրված իրավունքի իրականացման գործուն երաշխիք: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վերաքննիչ դատարանի դատական ակտը, օրինական ուժ է տալիս առաջին ատյանի դատարանի՝ իր կարծիքով արդարացի դատական ակտին: Օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին՝ վճռաբեկ դատարանը դրանով իսկ հաստատում է, որ առաջին ատյանի դատարանում գործի քննությունն իրականացվել է հավասարության եւ հրապարակայնության պայմաններում, ողջամիտ ժամկետներում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանի եզրափակիչ որոշման նոր տեսակը նպաստում է նաեւ դատական ակտերի շրջապատույտի կանխմանը՝ ապահովելով դատավարական խնայողության եւ ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով երաշխավորված՝ «դատավարության ողջամիտ տեւողության» սկզբունքների իրացումը:

Պատասխանողը գտնում է, որ դիմողի փաստարկները հիմնավոր չեն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետով սահմանված դրույթը չի հակասում ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին եւ դիմումը ենթակա է մերժման:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես իրավական պետություն, ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով հստակ նախատեսում է երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ իր խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքը՝ օրենքով սահմանված ձեւերով ու ծավալով: Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ է անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Մի շարք միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (10 հոդված), Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (6 հոդված), Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (14 հոդված) եւ այլ իրավական ակտերով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու անձանց՝ իրենց խախտված իրավունքները վերականգնելու եւ անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իրենց գործի հրապարակային քննության իրավունքը:

5. ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով եւ դատական համակարգում նրա դերով են պայմանավորված դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում 2006 թվականի հուլիսի 7-ի օրենսդրական փոփոխությունները, որի արդյունքում վճռաբեկ դատարանին, ի լրումն այլ լիազորությունների, իրավունք է վերապահվում օրինական ուժ տալ ստորադաս դատարանների դատական ակտերից մեկին, որը հիմնավոր կհամարվի՝ դրանով իսկ եզրափակելով տվյալ գործով քննությունն ընդհանուր իրավասության դատարաններում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի նախորդ խմբագրությունը հանգեցնում էր նրան, որ երբեմն պրակտիկայում հնարավոր չէր լինում խուսափել այնպիսի դեպքերից, երբ գործի քննությունն ընկնում էր շրջապատույտի մեջ եւ դատական քաշքշուկի պատճառով ստեղծվում էր ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով, Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով եւ մի շարք այլ իրավական ակտերով երաշխավորված՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի խախտման վտանգ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 3, 4 եւ 6 կետե-

րով նախատեսված լիազորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանին նման լիազորություններ վերապահելը նպատակ է հետապնդել կանխելու այն դատական շրջապատույտը, որը գոյություն է ունեցել մինչ այդ: Այդ լիազորությունների միջոցով դատական շրջապատույտի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաև ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

6. Հարցն է՛լ ավելի է կարեւորվում, երբ խոսքը վերաբերում է քրեական դատավարությանը, երբ գործի քննության անհարկի ձգձգումների պայմաններում, օրինակ, անձը շարունակում է գտնվել անազատության մեջ: Այս հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումն արտահայտված է ՄԳՈ-710 որոշման մեջ:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ ճանաչվում է քրեական գործով հետապնդվող յուրաքանչյուր անձի՝ ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը: Կոնկրետ քրեական դատավարության ձգձգումների առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորեցնում է պետություններին ստեղծել այնպիսի իրավական դաշտ եւ դատական համակարգ, որի պայմաններում կապալտպանվեն մեղադրյալների՝ Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով երաշխավորված իրավունքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում բազմիցս բացասական դիրքորոշում է արտահայտել հսկողական վարույթի շրջանակներում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի վերաբերյալ: Ըստ եվրոպական դատարանի՝ նման դատավարական ընթացակարգի կիրառման արդյունքում խախտվում են դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու կոնվենցիոն պահանջը, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքը, որը, ի թիվս այլ խնդիրների, պահանջում է, որ դատարանների ուժի մեջ մտած որոշումները կրկին չդառնան քննության առարկա:

7. Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետով նախատեսված լիազորությունը ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքները չեն փոխվում եւ՝ առաջին ատյանի դատարանի, եւ՝ վերաքննիչ դատարանի դատաքննության արդյունքում, եւ դատավճիռներով հաստատված միեւնույն փաս-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տը տարբեր դատարանների կողմից տարբեր քրեաիրավական գնահատականի է արժանանում: Նման գործը վճռաբեկության կարգով վերանայելիս ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է ուժի մեջ թողնել իրար հակասող դատական ակտերից մեկը: Այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն որեւէ ատյանի դատարանի կողմից քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը:

Նման գործերի քննության ժամանակ պետք է հաշվի առնվեն նաեւ ՀՀ քր. դատ. օր.-ի 397 հոդվածով նախատեսված դատավարության սկզբունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետը սահմանադրականության խնդիր չի առաջացնում եւ վճռաբեկ դատարանին վերապահված լիազորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքին: Հիշյալ լիազորությունների բացակայությունը, ընդհակառակը, կարող է վտանգել դատական պաշտպանության, արդար դատաքննության, ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքները: Այնուամենայնիվ, տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու, իրավական որոշակիությունն ապահովելու առումով ճիշտ կլինէր օրենքում հնարավորինս հստակեցնել այն հիմքերը, որոնք դատարանին հնարավորություն են տալիս կիրառել նշված լիազորությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11 դեկտեմբերի 2007 թվականի
ՍԳՈ-720



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻ, ԽԱՉԻԿ ՇԱՀՔԱԶՅԱՆԻ,
ԿԱՐԻՆԵ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ՍԵՎԱԿ ԳԵՐՁՅԱՆԻ, ՎՈՒՈՒՅԱ ԱՔԱԶՅԱՆԻ
ԵՎ ԷԳԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՏԵՂԱԿԱՆ
ՀԱՆՐԱՔՎԷԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
5 ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 դեկտեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝
դիմող՝ քաղ. Ա. Սաքունցի,
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի,
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանում ՀՀ դատախազության ներկայացուցիչ Հ. Ենգոյանի,
համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արթուր Սաքունցի, Խաչիկ Շահբազյանի, Կարինե Այվազյանի, Սեւակ Դերձյանի, Վուրդյա Աբազյանի եւ Էդգար Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Արթուր Սաքունցի, Խաչիկ Շահբազյանի, Կարինե Այվազյանի, Սեւակ Դերձյանի, Վոլոդյա Աբազյանի եւ Էդգար Խաչատրյանի դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների գրավոր բացատրությունները, հետազոտելով օրենքի վիճարկվող նորմերը, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Վիճարկելով «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականությունը, դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. ապրիլի 13-ի վճիռը, համաձայն որի՝ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի կիրառմամբ դատարանը մերժել է անվավեր ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու հարցով տեղական հանրաքվեի նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007թ. ապրիլի 3-ի թիվ 8-Ա որոշումը, ինչպես նաեւ տեղական հանրաքվեի նախաձեռնող խումբը գրանցելու մասին այդ հանձնաժողովի կողմից որոշում ընդունելուն պարտադրելու պահանջի մասին դիմումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ վճիռը, որպես վերջնական դատական ակտ, ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

2. Դիմողները միաժամանակ վիճարկում են «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի՝ ոչ միայն դատական ակտով կիրառված 5 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, այլեւ՝ այդ հոդվածի 2-րդ կետի դրույթների սահմանադրականությունը:

Նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի պահանջները, սույն գործով ենթակա է գնահատման ինչպես դատական վերջնական ակտով կիրառված օրենքի դրույթի, այնպես էլ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի այլ դրույթների սահմանադրականությունը:

3. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի փետրվարի 6-ին, Հայաստանի Հանրապե-

տության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի մարտի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 1-ին:

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը սահմանում է.

«Հոդված 5. Տեղական հանրաքվեի դրվող հարցերը

1. Տեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված եւ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաեւ օրենքով նախատեսված հարցերը:

2. Տեղական հանրաքվեի չեն կարող դրվել՝

ա/ Սահմանադրությամբ կամ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանն ուղղակիորեն վերապահված հարցերը.

բ/ մարդու եւ քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող հարցերը.

գ/ պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորություններին առնչվող հարցերը.

դ/ համայնքի ղեկավարի աշխատակազմի ձեւավորմանը վերաբերող հարցերը.

ե/ համայնքի բյուջեի ընդունման կամ փոփոխման, ինչպես նաեւ համայնքի ֆինանսական պարտավորությունների կատարման կամ փոփոխման մասին հարցերը.

զ/ համայնքի սեփականության օտարման մասին հարցերը.

է/ բնակչության առողջությունն ու անվտանգությունն ապահովող արտակարգ եւ շտապ միջոցառումներ ձեռնարկելու մասին հարցերը.

ը/ պատմության, մշակույթի, բնության հուշարձաններին եւ արգելանոցներին վնաս հասցնող հարցերը:

3. Տեղական հանրաքվեի դրվող հարցը պետք է ձեւակերպվի այնպես, որ հնարավոր լինի դրան տալ միանշանակ պատասխան»:

4. Դիմող կողմը գտնում է, որ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ հոդվածի 2-րդ կետի դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 2 եւ 107 հոդվածներին:

Դիմողներն իրենց դիրքորոշումը պատճառաբանում են հետեւյալ փաստարկներով.

ա/ ՀՀ Սահմանադրության 2 հոդվածը ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս երկրի պետական եւ (կամ) տեղական ինքնակառավարմանը մասնակցել ընտրությունների եւ հանրաքվեների միջոցով,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մինչդեռ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետը սահմանափակում է տեղական հանրաքվե անցկացնելու՝ համայնքի բնակիչների հնարավորությունը, հանրաքվեի միջոցով իշխանություն իրականացնելու վերաբերյալ ՀՀ Սահմանադրությամբ սահմանափակումներ նախատեսված չեն եւ հանրաքվեի իրավունքը սահմանափակող օրենք ընդունելու հնարավորություն օրենսդիր իշխանությանն ընձեռված չէ,

բ/ ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:... «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետում նշված տեղական հանրաքվեի համար նախատեսված բոլոր սահմանափակումները (բացառությամբ վերոհիշյալ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «բ» եւ «ը» ենթակետերի) վերաբերում են համայնքի գործերի կառավարմանը մասնակցելուն, հետեւաբար՝ օրենքի այդ նորմը սահմանափակում է համայնքի գործերի կառավարմանը մասնակցելու՝ համայնքի բնակիչների իրավունքը, իսկ նույն օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «բ» եւ «ը» ենթակետերի դրույթները հակասահմանադրական են, քանի որ վերոհիշյալ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված եւ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված եւ օրենքով նախատեսված հարցերը, մինչդեռ օրենքի այդ հոդվածի 2-րդ կետի «բ» եւ «ը» ենթակետերով նախատեսված են համայնքի ղեկավարին կամ ավագանուն չպատկանող լիազորություններ:

Դիմող կողմը գտնում է նաև, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 4 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում, օգտվում են սեփական նախաձեռնությունների իրականացման լիակատար ազատությունից, որոնք այլ մարմինների վերապահված չեն, այդ լիազորությունները պետք է լինեն «լրիվ եւ բացառիկ» եւ կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված շրջանակներում, որը միանշանակ հիմք է տալիս պնդելու, որ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետում նշված լիազորությունները բացառիկ են եւ ենթադրում են այլ մարմինների կողմից դրանք կրկնելու անթույլատրելիությունը՝ բացառությամբ հանրաքվեի, քանի որ այն հանդիսանում է անմիջական ժողովրդավարության ինստիտուտներից մեկը՝ ուղղված տեղական կամ համազգային նշանակության հարցերի լուծմանը: Ըստ դիմող կողմի՝ լիազորությունների բացառիկությունը վերաբերում է դրանց՝ այլ պետական մարմինների հետ հարաբերություններում անկրկնելիությանը, մինչդեռ համայնքային նշանակու-

թյան հարցերի լուծման դեպքում՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված հնարավորությունը (ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մաս) միանշանակ տարածվում է նաև տեղական հանրաքվեի ինստիտուտի վրա:

5. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմող կողմի բերած հիմնավորումներն ու եզրահանգումը բավարար հիմք չեն «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետը ՀՀ Սահմանադրության 2 եւ 107 հոդվածներին հակասող ճանաչելու համար: Մասնավորապես.

ա/ միջազգային փորձը միանշանակ չէ ժողովրդական նախաձեռնության իրավական կարգավորման հարցում եւ այդ նախաձեռնության իրագործման նպատակով առավել հաճախ նախատեսվում են սահմանափակումներ՝ կապված նախաձեռնության իրավական կարգավորման առարկայի, ընտրողների նվազագույն թվի, ինչպես նաև այդպիսի նախաձեռնության իրավունքի սուբյեկտների հետ: Հետևաբար, տեղական հանրաքվեների առարկային վերաբերող սահմանափակումները չեն կարող դիտարկվել որպես ժողովրդի կողմից իշխանության իրականացման իրավունքի սահմանափակում, հանրաքվեներին վերաբերող հարցերի բնույթի սահմանափակումները չեն կարող համարվել ժողովրդի կողմից իշխանության իրականացման իրավունքի խախտում, քանի որ ժողովուրդն իր իշխանությունը կարող է իրականացնել որեւէ ձևով, այն է՝ ընտրությունների կամ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով, եւ ցանկացած հարց հանրաքվեի դեպքում կհանգեցնի պետական իշխանության թուլացման,

բ/ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետում թվարկված սահմանափակումները, ըստ էության, որեւէ առնչություն չունեն համայնքային նշանակության հարցերի լուծման հետ, մինչդեռ ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մասում խոսքը վերաբերում է համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելուն:

Պատասխանող կողմը նաև կարծիք է հայտնում, որ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու իրավունքի հիմնախնդրի հետ ուղղակի առնչություն ունի պատգամավորի հետկանչի ինստիտուտը, որը վերացվեց եվրոպական երկրների առաջավոր փորձի ուսումնասիրման արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ ունենալով առաջնային մանդատ, համապատասխան պաշտոնատար անձը պետք է ունենա իրական եւ անկաշկանդ հնարավորություն՝ իրականացնելու Սահմանադրությամբ եւ օրենքներով իրեն վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով:

6. ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 11.2., 30, 43, 104, 107 եւ այլ հոդվածներում ամրագրված են ժողովրդաիշխանության եւ դրա իրականացման ե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

րաշխավորման, անձանց՝ որպես այդ իշխանության անմիջական կրողների, իրավունքների եւ ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում՝ նաեւ տեղական (համայնքային) նշանակության հարցեր լուծելու հետ կապված հարաբերությունների կարգավորման բնագավառում:

Որպես ժողովրդաիշխանության իրականացման ձեւ՝ տեղական հանրաքվեների կազմակերպման ու անցկացման սկզբունքային խնդիրները նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ժողովրդաիշխանությունն իրականացվում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Տեղական հանրաքվեն, ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով համայնքի գործերի կառավարմանը համայնքի անդամների ուղղակի մասնակցության ձեւն է, որը կոչված է լուծելու համայնքային նշանակության հարցերը:

ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով է սահմանվում հանրաքվեների կարգը:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի վերլուծությունը վկայում է, որ տեղական հանրաքվեների եւ դրանց կազմակերպման ու անցկացման հետ կապված հարաբերությունների կարգավորումը վերապահված է օրենքին: Մասնավորապես, հարաբերությունների կարգավորմանն են կոչված «Տեղական հանրաքվեի մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները:

7. Ելնելով դիմող կողմի հարցադրումներից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 104 հոդվածի 2-րդ մասի, 105 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 107 հոդվածի 4-րդ մասի բովանդակությունը, անդրադառնալ նախ՝ «համայնքային նշանակության հարցեր» արտահայտության իրավավերլուծական խնդրին՝ այնքանով, որքանով այն առնչվում է տեղական հանրաքվեի ենթակա հարցերի շրջանակին:

Սահմանադրության վերոհիշյալ հոդվածների եւ «Տեղական հանրաքվեի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների համապատասխան նորմերից հետեւում է, որ տեղական հանրաքվեի կարող են դրվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը ենթակա հարցեր՝ այն

բացառություններով, որոնք նախատեսված են «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի վիճարկվող նորմերում: Ընդ որում, եթե օրենքի այդ հոդվածի 2-րդ կետի «գ», «ե» եւ «ը» ենթակետերով նախատեսված հարցերը դուրս են տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք իրավասության շրջանակներից, ապա «բ» ենթակետից բխող մարդու իրավունքների եւ ազատությունների ապահովման երաշխիքների հնարավոր փոփոխությունը՝ համաժողովրդական քննարկման (հանրաքվեի) խնդիր է: Ուստի դրանով է նաեւ պայմանավորված տեղական հանրաքվեի դրվող հարցերի՝ օրենքով նախատեսված թույլատրելի շրջանակը:

Տեղական հանրաքվեի չեն կարող դրվել նաեւ այնպիսի հարցեր, որոնց լուծումը Սահմանադրությամբ եւ օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց կողմից ձեւավորվող մասնագիտացված մարմինների բացառիկ իրավասությանը (ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 2-րդ մաս), ինչն արտացոլված է նաեւ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի «ա», «դ», «ե» եւ «զ» ենթակետերում: Այլ կերպ, այդպիսի հարցերի լուծման իրավունքը համայնքի բնակիչների կողմից՝ ՀՀ Սահմանադրության եւ օրենքի հիման վրա պատվիրակված է ընտրությամբ ձեւավորվող տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ վերջիններիս պատվիրակված լիազորությունների կրկնօրինակումը (փոփոխությունը) տեղական հանրաքվե նախաձեռնելու միջոցով՝ իրավաչափ չէ եւ չի բխում Սահմանադրության վերոհիշյալ նորմերից:

8. Անդրադառնալով տեղական հանրաքվեներում քննարկման ենթակա հարցերի շրջանակին եւ դրանց բովանդակությանը, ելնելով «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր նորմերից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարեւորել օրենքի 1-ին հոդվածի բնորոշումն այն մասին, որ «տեղական հանրաքվեն տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության կարեւոր հարցերով քվեարկությունն է», այսինքն՝ համայնքներում քվեարկության ենթակա տեղական նշանակության հարցերի առարկայական շրջանակը սահմանափակ է: Մյուս կողմից, օրենքի վերոհիշյալ նորմը զարգացվել է 5 հոդվածի 1-ին կետում, համաձայն որի՝ տեղական հանրաքվեի կարող են դրվել հարցեր, որոնք նախատեսված են.

ա/ Սահմանադրությամբ,

բ/ օրենքով,

գ/ վերապահված են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը:

ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մասում նախատեսված է համայնքային (տեղական) նշանակության հարցերը տեղական հանրաք-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վեով եւ օրենքով սահմանված կարգով լուծելու իրավունք, իսկ 110 հոդվածում նախատեսված է տեղական հանրաքվեի անցկացում՝ համայնքները միմյանց միացնելու կամ առանձնացնելու նպատակներով: Տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավար, ավագանի) իրավասությանը ենթակա հարցերը նախատեսված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, իսկ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետում թվարկված բացառություններով փաստորեն սահմանափակվում է տեղական հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը:

Այսպիսով, համայնքային (տեղական) նշանակության հարցերի, հավասարապես՝ նաեւ տեղական հանրաքվեի դրվող հարցերի, առարկայական շրջանակը սահմանադրորեն չկանխորոշելու, եւ տեղական հանրաքվեների, դրանց կազմակերպման, անցկացման եւ արդյունքների ամփոփման օրենսդրական պարտադիր կանոնակարգումը որպես սահմանադրական սկզբունք հաստատագրելու պայմաններում (ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 7-րդ կետ), տեղական հանրաքվեի դրվող հարցերի **սահմանափակումն** իրավաչափ է եւ բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերից, այնպես էլ ՀՀ-ում սահմանադրական կարգի հաստատագրված այն սկզբունքից, համաձայն որի՝ հանրաքվեն, ազատ ընտրությունները եւ ընտրովի մարմինների միջոցով տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության իրականացման ինքնուրույն ձեւեր են (ՀՀ Սահմանադրության 2 հոդված):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ լինելով ժողովրդաիշխանության իրականացման (տեղական բնակչության կամքի արտահայտման) սահմանադրորեն որոշված ինքնուրույն ձեւ, հանրաքվեն չի կարող փոխարինել այդպիսի իշխանության այլ ձեւերին այնպես, ինչպես վերջիններս՝ հանրաքվեին: Տեղական հանրաքվեն եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները համայնքի բնակիչների ազատ կամքի արտահայտման (ինքնակառավարման իրավունքի իրականացման) բարձրագույն ձեւեր են եւ անփոխարինելի՝ լուծվող խնդիրների շրջանակներով, իրավական կարգավորմամբ: Եթե առաջինի դեպքում քվեարկության են դրվում համայնքային նշանակության կարեւոր հարցեր, ապա երկրորդի դեպքում կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմիններ (համայնքի ղեկավար եւ ավագանի), որոնց միջոցով (համայնքի անդամների անուղղակի մասնակցությամբ), օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք) նույնպես լուծվում են համայնքային (տեղական) նշանակության հարցեր: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերի բովանդակությունից միանշանակ հե-

տեւում է, որ տեղական հանրաքվեն համայնքի անդամների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցելու ձեւ է:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է ինչպես պարտադիր իրավական հետեւանքներ առաջացնող, այնպես էլ նման հետեւանքներ չառաջացնող հանրաքվեի ինստիտուտ (մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 110 հոդվածի 1-ին մաս): Օրենսդրական ճանապարհով համայնքային նշանակության հարցերի լուծման ժամանակ պարտադիր հետեւանքներ չառաջացնող հանրաքվեների ինստիտուտի ավելի լայն արմատավորումը մեծապես կարող էր նպաստել տեղական ինքնակառավարման մակարդակում ժողովրդավարական գործընթացների զարգացմանը, որը կրիսեր նաեւ ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1121 (1997) բանաձեւի դրույթներից:

9. Անդրադառնալով տեղական հանրաքվեների կազմակերպման ու անցկացման հետ կապված հարցերի իրավական կարգավորման եվրոպական պրակտիկային՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարեւորել Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1121 (1997) բանաձեւի (ընդունված 1997թ. ապրիլի 22-ին) մի շարք դրույթներ, որոնք նվիրված են քաղաքական կյանքին քաղաքացիների ուղղակի մասնակցության ընդլայնման անհրաժեշտությանը, հանրաքվեի ղիտարկվում է որպես օժանդակ միջոց, ընդ որում, ընդգծվում է, որ քաղաքացիների եւ նրանց խմբերի առավել հակասական եւ չհամընկնող պահանջների՝ ընդհանուր շահերով թելադրված ներդաշնակեցումը կարող է դառնալ միայն խորհրդարանական գործունեության արդյունք (այսինքն՝ օրենսդրական կարգավորման առարկա) (6-րդ կետ):

Խորհրդարանական վեհաժողովը միաժամանակ կոչ է արել անդամ պետություններին ցանկացած հարց ղիտարկել որպես հանրաքվեի առարկա, բացառությամբ այն հարցերի, որոնք կասկածի տակ են դնում համընդհանուր եւ անօտարելի արժեքները, ինչպիսիք են մարդու իրավունքներն ու ներկայացուցչական հիմնարար սկզբունքները:

Վեհաժողովը նաեւ նախազգուշացրել է կոչ է արել՝ սահմանել ներպետական նորմեր եւ ղեկավար սկզբունքներ հանրաքվեների անբարեխիղճ օգտագործումը կանխելու նպատակով (բանաձեւի 15-րդ կետի 8-րդ ենթակետ):

«Տեղական մակարդակում հանրաքվեների եւ հասարակական նախաձեռնությունների մասին» R(96)2 (1996) հանձնարարականում կարեւորելով տեղական հանրաքվեների դերն ու նշանակությունը, ԵԽ Նախարարների կոմիտեն դրանք համարում է որպես տեղական ներկայացուցչական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մարմնի որոշումները կամ ծրագրերը տեղական բնակչության քննարկմանը ներկայացնելու միջոց:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների իրավակիրառական պրակտիկայի ընդհանուր վերլուծությունը վկայում է, որ չնայած տեղական նշանակության հանրաքվեներում դրվող հարցերը տարաբնույթ են, այնուամենայնիվ, նախատեսված են սահմանափակումներ՝ պայմանավորված հարցերի բնույթով, քվեարկության դրվող իրավական ակտերի տեսակներով եւ այլն:

10. Սույն գործի շրջանակներում «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի նորմերի սահմանադրականության վիճարկման հիմքը ոչ միայն հանրաքվեի դրվող հարցերի սահմանափակ բնույթն է, այլև համայնքի ընտրովի գործադիր մարմնի՝ համայնքի ղեկավարի լիազորությունները տեղական հանրաքվեի միջոցով վաղաժամկետ դադարեցնելու իրավական անհնարինությունը:

Համայնքի ղեկավարը սահմանադրաիրավական մարմին է, որի ձեւավորման եւ գործունեության սկզբունքները որոշված են սահմանադրոթեն, համաձայն որի՝ համայնքի ղեկավարն ընտրվում է օրենքով սահմանված կարգով՝ չորս տարի ժամկետով, եւ համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է օրենքով (ՀՀ Սահմանադրության 107 հոդված): Հետեւաբար, համայնքի ղեկավարի գործունեության վաղաժամկետ դադարեցումը (սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պաշտոնանկ անելը) ոչ թե համայնքային նշանակության գործերի կառավարման խնդիր է, ինչպես կարծում է դիմող կողմը, այլ՝ հանրային-իրավական (սահմանադրաիրավական): «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետը վերաբերում է ոչ միայն օրենքով, այլև Սահմանադրությանը տեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանը վերապահված հարցերին: Համայնքային նշանակության գործերի կառավարումն ուղղված է բացառապես համայնքային նշանակության հարցերի լուծմանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների այն լիազորությունների շրջանակներում, որպիսիք նախատեսված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

Սահմանադրական դատարանը նաեւ գտնում է, որ համայնքի բնակչության անմիջական նախաձեռնությամբ (հանրաքվեով) համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (հետկանչման) ինստիտուտի բացակայությամբ ամենեւին չի սահմանափակվում մարդու եւ քաղաքացու (համայնքի անդամների)՝ համայնքի գործերի կառավարմանը մասնակցելու՝ Սահմանադրությանը ամրագրված իրավուն-

քր: Բացի դրանից, անմիջական ժողովրդավարության դրսևորման ձեւերից բացի, գործող օրենսդրությամբ նախատեսված է համայնքի ղեկավարի գործունեության երաշխավորված վերահսկման (համայնքի գործերի կառավարմանը բնակչության մասնակցության) այլ միջոցներ, մասնավորապէս՝ համայնքի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու միջոցով («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11, 16, 17, 19, 20 եւ այլ հոդվածներ), ընդհուպ նաեւ ավագանու միջոցով համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկության նախաձեռնումը ՀՀ կառավարման համապատասխան մարմնի (մարզպետի, Երեսնի քաղաքապետի) առջեւ:

Ուստի տեղական հանրաքվեն օրենքով թույլատրելի քննարկման հարցերի շրջանակով, եւ որպէս համայնքային նշանակության հարցերի լուծման միջոց, տեղական ինքնակառավարման գործունեության վերահսկման ապահովման նույնքան կարեւոր երաշխիք է, որքան պետական եւ հասարակական վերահսկողության՝ օրենքով նախատեսված մյուս ձեւերը, որոնք ամբողջությամբ կոչված են համայնքներում ապահովելու մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների անխախտելիությունը: Բացի դրանից, ՀՀ սահմանադրական փոփոխություններով պայմանավորված (ՀՀ Սահմ. 108.1. հոդված)՝ օրենքով հստակեցվել են՝ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ իրավական (վարչական) հսկողություն իրականացնելու, ինչպէս նաեւ այդ մարմինների գործողությունները (անգործությունը) դատական կարգով բողոքարկելու կարգն ու ձեւերը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7.1 գլուխ), իսկ ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 8-րդ կետի, 101 հոդվածի 4-րդ կետի շրջանակներում՝ նաեւ սահմանադրական վերահսկողության իրականացման երաշխիքները: Ուստի իրավական կարգավորման հիմնական խնդիրն է ելնել համայնքի արդյունավետ կառավարման նպատակով պետական եւ հասարակական վերահսկողության բոլոր ձեւերի ու միջոցների ներդաշնակ եւ ամբողջական գործադրման անհրաժեշտությունից, որը համահունչ է ինչպէս ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 եւ 5 հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի սկզբունքներին եւ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության հետագա զարգացման նպատակներին, այնպէս էլ Եվրոպայի խորհրդի շրջանակներում հաստատված իրավակիրառական պրակտիկային:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 դեկտեմբերի 2007 թվականի
ՍԳՈ-721



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՒՔԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 40.1. ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ «ԳԻՄՈՒՄԸ
ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԳԻՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ» ԴՐՈՒՅԹԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 դեկտեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ Պողոսյանի,

մասնակցությամբ՝

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ Դ.Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 69 հոդվածների,

դռնբաց միատում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1. հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ռ.Թորոսյանի՝ սահմանադրական դատարանում 03.12.2007թ. մուտքագրված դիմումն է:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով վիճարկվող նորմը, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հաստատանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1. հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթի սահմանադրականությունը, դիմողը սահմանադրական դատարան է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. նոյեմբերի 26-ի վճիռը, որով մերժվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անգործության վիճարկման վերաբերյալ քաղ. Ռ. Թորոսյանի դիմումը, համաձայն որի՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, խախտելով ՀՀ ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետը, չի արձագանքել էլեկտրոնային փոստով հանձնաժողովին հասցեագրած դիմողի առաջարկությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155 հոդվածի համաձայն՝ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ վճիռը, որպես վերջնական դատական ակտ, ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

2. ՀՀ ընտրական օրենսգրքի ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի փետրվարի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի փետրվարի 17-ին եւ ուժի մեջ է մտել նույն թվականի փետրվարի 28-ին:

ՀՀ ընտրական օրենսգրքի մի շարք օրենքներով փոփոխվել է:

ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1. հոդվածի՝ սույն գործով վիճարկվող դրույթը պարունակող նորմը (3-րդ կետի առաջին պարբերությունը) ներկայիս խմբագրությամբ սահմանում է. «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից, պարունակի նրա անունը, ազգանունը, բնակության հասցեն, տրման ամսաթիվը, ամիսը եւ տարեթիվը: Դիմումատուն պետք է հստակ սահմանի իր պահանջը, բերի հիմնավորումներ, իսկ հնարավոր ապացույցները կցի դիմումին: Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չպարունակող կամ կեղծ տվյալներ պարունակող դիմումները չեն քննարկվում»:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածին, քանի որ անձը զրկվում է պետական մարմնին դիմելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքից:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նոնակարգում (գործավարության կարգում) «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքից բխող նորմերի բացակայությունը հնարավորություն է ընձեռում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին չքննարկել ընտրախախտումների վերաբերյալ էլեկտրոնային փոստով ստացված դիմումները, ինչպես նաեւ խոչընդոտում է դիմողին պահպանել ՀՀ ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 5-րդ կետով սահմանված երկօրյա ժամկետը:

Դիմողը գտնում է նաեւ, որ «հիմք ընդունելով ՀՀ քաղ.օր. 9-րդ հոդվածի պահանջները, ղեկավարվել ԸՕ 40-րդ հոդվածի 7 եւ 8-րդ կետերի պահանջներով եւ սույն դիմումը քննել ընտրությունների ժամանակահատվածի համար սահմանված ժամկետում»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված անձի իրավունքը բացարձակ չէ, քանի որ, ինչպես ցանկացած իրավունք, այդ թվում իրավասու մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը ենթադրում է իրականացման կանոնակարգեր:

Դիմումատուի կողմից դիմումի ստորագրումը դրա արժանահավատությունն ապահովող կարեւորագույն պայման է, նպատակ ունի անձին նույնացնելու, պաշտպանելու փաստաթուղթը կեղծիքներից եւ աղավաղումներից: Ըստ պատասխանող կողմի՝ էլեկտրոնային ստորագրություններով փաստաթղթեր ուղարկելու կամ դրանք ընդունելու հնարավորության բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ դիմումն ստորագրված լինելու՝ ՀՀ ընտրական օրենսգրքով ներկայացվող պահանջը ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչելու համար, քանի որ յուրաքանչյուր դեպքում անձը պահպանում է ձեռագիր ստորագրությամբ համապատասխան փաստաթղթերն իրավասու մարմինն ներկայացնելու հնարավորությունը:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումների հիման վրա անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության գնահատման կարգը եւ առանձնահատկությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով: Իր հերթին, ՀՀ Սահմանադրության 94 հոդվածը սահմանում է, որ «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով»: Ուստի անընդունելի է դիմող կողմի առաջարկությունը գործի քննության ժամկետների վերաբերյալ:

6. ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված՝ անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին (հանրային իշխանության մարմիններին) ու պաշտոնատար անձանց դիմումներ, առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու անձի իրավունքը ժողովրդավարության դրսևորումներից մեկն է եւ կարելուր նախապայման՝ անձի հիմնական իրավունքների եւ ազատությունների արդյունավետ պաշտպանության, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 եւ մի շարք այլ հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքների անխախտելիությունը երաշխավորելու համար:

ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը սահմանվում են օրենքներով: Սահմանադրական այդ նորմի բովանդակությունից հետեւում է, որ անձի ցանկացած, այդ թվում հանրային իշխանության մարմիններին դիմելու նրա իրավունքի իրացման խնդիրը ենթակա է օրենքով կարգավորման:

ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածի դրույթների իրացումը՝ կապված անձանց եւ հանրային իշխանության մարմինների, պաշտոնատար անձանց միջեւ ծագած հարաբերությունների հետ, կարգավորվում են մի շարք օրենքներով եւ ենթաօրենսդրական ակտերով, որոնց վերլուծությունը վկայում է, որ.

ա/ անձնական, պետական եւ հասարակական կյանքի բնագավառներին վերաբերող տեղեկատվություն պարունակող (իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան լուծում պահանջող) անձանց դիմումները պետք է հասցեագրվեն հանրային իշխանության իրավասու մարմիններին (պաշտոնատար անձանց),

բ/ անձանց դիմումները պետք է համապատասխանեն իրավական ակտով նախատեսված ձեւական պահանջներին (գրավոր ձեւ, հասցեագրված մարմնի անվանում, տեղեկություններ դիմողի վերաբերյալ, անձնական (էլեկտրոնային) ստորագրություն, դիմումի բովանդակության շարադրանք եւ այլն),

գ/ հանրային իշխանության իրավասու մարմինը (պաշտոնատար անձը) դիմումում բարձրացված հարցի առնչությամբ պետք է ձեռնարկի այն գործողությունները (սահմանված ժամկետում ու կարգով), որպիսիք նախատեսված են նորմատիվ իրավական համապատասխան ակտում:

Այլ կերպ, դիմումներին ներկայացված ձեւական պահանջները նպատակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել պարտականություններով, այլ նույնականացնել դիմումատուին, ապահովել դիմումների բովանդակու-

թյան իսկությունը, հարցադրումների առարկայացումը, որպիսիք դիմումներում առաջադրված խնդիրների արագ, օբյեկտիվ եւ արդյունավետ լուծման երաշխիք են:

Այսպիսով, անձանց եւ հանրային իշխանության մարմինների միջեւ ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածի դրույթներից բխող հարաբերությունների օրենսդրական կարգավորման հիմքում ՀՀ սահմանադրական դատարանը կարելու է սուբյեկտիվ իրավունքների եւ պարտականությունների փոխադարձության եւ դրանց ներդաշնակեցման միասնական իրավական սկզբունքի կիրառման առկայությունը՝ որպես սահմանադրական վերոհիշյալ նորմերի արդյունավետ իրացման նախապայման: ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ հանրային իրավական (սահմանադրաիրավական) հարաբերություններում այդ սկզբունքի արդյունավետ գործադրման գրավականը ոչ միայն սուբյեկտիվ իրավունքների իրականացման պայմանների իրավական կարգավորումն է, այլեւ իրավունքի նորմերին համապատասխան սուբյեկտիվ վարքագիծ դրսևորելը:

7. Անդրադառնալով ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1. հոդվածի՝ սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականության խնդրին, ելնելով նաեւ հասարակական համասեռ հարաբերությունների իրավական կարգավորման վերը փաստված միասնական սկզբունքի բովանդակությունից, սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես հանրային իշխանության մյուս մարմիններին, այնպես էլ ընտրական հանձնաժողովներին եւ, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին հասցեագրված՝ անձանց դիմումների նկատմամբ անհրաժեշտաբար պետք է ներկայացվեն ձեւական միասնական պահանջներ (այդ թվում՝ անձի ստորագրության, նրան առնչվող անհրաժեշտ տեղեկությունների վերաբերյալ)՝ ապահովելու համար ընտրական գործընթացներով պայմանավորված անձանց դիմումների արագ եւ արդյունավետ քննարկումը, որը նաեւ կարելու է երաշխիք է այնուհետեւ արդար եւ արդյունավետ դատաքննության իրականացման համար:

ՀՀ ընտրական օրենսգրքի 40, 40.1. եւ այլ հոդվածների վերլուծությունը վկայում է, որ ընտրական գործընթացներով պայմանավորված անձանց դիմումների նկատմամբ ձեւական պահանջների ներկայացման հարցում օրենսդիրն առաջնորդվել է միասնական մոտեցմամբ:

Հետեւաբար, անկախ այդ պահանջների նկատմամբ անձի դրսևորած սուբյեկտիվ վերաբերմունքից, լինելով համապարտադիր, դրանք կոչված են նպաստելու ժողովրդավարության ամրապնդման ու հետագա զարգացման սահմանադրական նպատակների իրագործմանը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել եւ գնահատել նաեւ ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածի նորմերի երաշխավորված գործադրման ապահովումը 2004թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում՝ պայմանավորված ընտրական գործընթացներով, նկատի ունենալով նաեւ վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ այդ օրենքի նորմերի կիրառման փաստը:

«Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան էլեկտրոնային թվային ստորագրության եւ դրանով պայմանավորված՝ ՀՀ հանրային իշխանության մարմինների միասնական էլեկտրոնային փաստաթղթաշարժի (այդ թվում՝ անձանց կողմից այդ մարմիններին էլեկտրոնային փոստով հասցեագրվող դիմումների) կազմակերպման իրավական հիմքերի սահմանումն է, որը կոչված է նպաստելու անձանց եւ հանրային իշխանության մարմինների միջեւ հարաբերությունների իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանը: Այդ օրենքի գործողությունը ՀՀ գործադիր մարմինների (մասնավորապես՝ զանձապետարանի) տեղեկատվական համակարգում ապահովելու նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի մի շարք որոշումներ եւ գերատեսչական ակտեր:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած վերոհիշյալ օրենքի գործողությունը պետական իշխանության այլ մարմիններում եւ տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում կրում է հայեցողական բնույթ, այնուամենայնիվ, այդ օրենքի դրույթների կիրառումն ապահովող անհրաժեշտ պայմանների ստեղծումը (մասնավորապես, էլեկտրոնային փաստաթղթերի ու էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման հստակ համակարգ նախատեսելու, եւ հավաստագրման գործընթացի պատշաճ կազմակերպման բնագավառներում) կնպաստեր անձանց եւ հանրային իշխանության մարմինների միջեւ ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված նորմով պայմանավորված հարաբերությունների (այդ թվում՝ ընտրական գործընթացների հետ կապված) առավել արդյունավետ կարգավորմանը: Այսպես, ՀՀ առետրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից սույն գործով ներկայացված տեղեկատվությունը, «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում են, որ բացի ՀՀ բանկային համակարգից եւ մասամբ մի քանի այլ ոլորտներից, էլեկտրոնային թվային ստորագրության համակարգը հիմնականում չի գործում:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ մարդու

իրավունքների իրականացումը չպետք է խաթարվի վարչակազմակերպչական բնույթի խոչընդոտների պատճառով: «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը...»:

Հիշյալ օրենքի եւ, մասնավորապես, դրա 4-րդ հոդվածի նշված նորմի գործողության պայմաններում, ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված իր իրավունքի իրացմամբ, անձը պետք է ընտրի իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու ձեւը (ձեռագիր կամ էլեկտրոնային ստորագրությամբ): Բոլոր այն դեպքերում, երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի (դիմումի) ստորագրված լինելու պայման է առաջադրված եւ պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, ապա որեւէ տարբերակում չպետք է դրվի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջեւ:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**21 դեկտեմբերի 2007 թվականի
ՍԳՈ-722**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԾՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 73
ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունվարի 2008թ.

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(47)2008

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 02.10.2007թ. մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմողի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հետագոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002թ. նոյեմբերի 19-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. մարտի 31-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. ապրիլի 10-ից:

Օրենքի 73 հոդվածը, որը շարադրված է «Անցումային դրույթներ» 14-րդ գլխում, սահմանում է. «Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով հաշվարկված ստաժին համապատասխան՝ հաշվի առնելով սույն օրենքի 17-19-րդ հոդվածներին համապատասխան սահմանված հիմնական կենսաթոշակի չափը, ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը եւ կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

Լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով եւ համարվում է նոր նշանակում:

Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով»:

2. Դիմող կողմը վիճարկում է օրենքի 73 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասին՝ այն հիմնավորմամբ, որ այդ դրույթը, վատթարացնելով քաղաքացիների իրավական վիճակը, կիրառվում է հետադարձ ուժով: Մինչդեռ, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերին, ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան, չի կարող հետադարձ ուժ տրվել:

Դիմողը փաստում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի համաձայն մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացառությամբ նույն օրենքի 48 հոդվածով սահմանված կարգի: Նշված 48 հոդվածը, սակայն, առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքը չի դիտում որպես ստաժի հաշվարկման առանձնահատկություն: Մինչդեռ, նախկինում գործող «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի համաձայն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պայմաններում աշխատելու ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկվում էր մեկուկես անգամ:

Դիմողը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասը՝ նույն օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ փոխադարձ կապի մեջ, մինչև օրենքի ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած եւ կենսաթոշակի նշանակումից հետո աշխատանքային գործունեությունը շարունակած անձանց կենսաթոշակային իրավունքները գնահատելիս կամ բացառում է նշված հիմքով աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկումը, կամ թույլ չի տալիս ապահովագրական ստաժում հաշվարկել կենսաթոշակի նշանակումից հետո իրականացված աշխատանքային գործունեության այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կատարվել են սոցիալական ապահովագրության վճարները: Դրանով օրենքը վատթարացնում է քաղաքացիների վիճակը եւ վերացնում նախկինում գործող օրենսդրությամբ ձեռք բերված նրանց իրավունքները, ուստի պատկանում է այն նորմերի թվին, որոնց չի կարող հետադարձ ուժ տրվել:

3. Ըստ պատասխանող կողմի՝ դիմողի փաստարկները հիմնավոր են, վիճարկվող նորմով հետադարձ ուժ է տրվել քաղաքացիների իրավական վիճակը վատթարացնող դրույթի, վերացվել է նախկինում գործող ՀՀ օրենսդրությամբ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատելու համար քաղաքացիներին տրվող արտոնությունը՝ կապված այդպիսի պայմաններում աշխատելու ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկելու առանձնահատկությունների հետ:

Պատասխանող կողմն ակնհայտ համարելով վիճարկվող նորմի հակասությունը ՀՀ Սահմանադրությանը՝ գտնում է նաեւ, որ օրենքի վիճարկվող դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու դեպքում առանձնապես վնասակար եւ առանձնապես ծանր պայմաններում աշխատած անձանց համար ապահովագրական ստաժի հաշվարկման խնդիրը չի լուծվում: Այս առումով, թերեւս, անհրաժեշտություն կառաջանա խնդիրը լրացուցիչ կարգավորել օրենսդրական մակարդակում:

4. ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասն ամրագրում է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքը: Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության եւ իրավական պետության սկզբունքների կարեւոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարեւոր

երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաեւ ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով:

5. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածը սահմանում է մինչեւ այդ օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման կարգը: Օրենսդիրն այդ կարգը սահմանելիս տարբերակել է կենսաթոշակը վերահաշվարկելու հետեւյալ երկու իրավիճակները.

- երբ կենսաթոշակի վերահաշվարկը կատարվում է արդեն իսկ գործում առկա փաստաթղթերի հիման վրա,

- երբ ներկայացվում են ստաժը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր:

Առաջին դեպքում, նախկինում նշանակված կենսաթոշակը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված նոր կարգով վերահաշվարկելիս հիմք է ընդունվում նախկինում գործող «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 06.12.1995թ., ուժը կորցրել է 10.04.2003թ.) հիման վրա հաշվարկված աշխատանքային ստաժը: Այդ օրենքի 30 հոդվածի համաձայն, որը սահմանում էր աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը, առանձնապես վնասակար եւ առանձնապես ծանր պայմաններում աշխատելու ժամանակահատվածում աշխատանքային ստաժը հաշվարկվում էր մեկ եւ կես անգամ: Հաշվի առնելով, որ, ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 1-ին մասի, նախկինում նշանակված կենսաթոշակը նշված օրենքով սահմանված կարգով վերահաշվարկելիս հիմք է ընդունվում արդեն իսկ հաշվարկված ստաժը, ապա վերահաշվարկելիս պահպանվում է աշխատանքային ստաժի այն արտոնյալ հաշվարկման կարգը, որը գործել է «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի հիմա վրա:

Մինչդեռ, երկրորդ դեպքում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելիս նախկինում նշանակված կենսաթոշակն այդ օրենքով սահմանված նոր կարգով վերահաշվարկելիս այդ օրենքի հիման վրա է հաշվարկվում եւ՝ ստաժի այն հատվածը, որն արդեն հիմնավորված է գործում առկա փաստաթղթերով, եւ՝ լրացուցիչ փաստաթղթերով ներկայացված ստաժը: Իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացառությամբ այդ օրենքի 48 հոդվածով սահմանված կարգի: Վերջինս էլ, իր հեր-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թին, առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքը չի դիտում որպես ստաժի հաշվարկման առանձնահատկություն: Ուստի կենսաթոշակը նշված դրույթների հիման վրա վերահաշվարկելիս չի պահպանվում առանձնապես վնասակար եւ առանձնապես ծանր պայմաններում աշխատանքի ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը:

Օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման կարգավորման արդյունքում վերահաշվարկ կատարելիս մեծ մասամբ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ վերահաշվարկված գումարն ավելի նվազ լինի, քան նախկինում նշանակվածը, օրենքի 73 հոդվածի 3-րդ մասով նախատեսել է, որ եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչեւ այդ օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Սակայն այս դրույթը լիովին չի լուծում քաղաքացու համար վերահաշվարկի արդյունքում ստեղծվող բացասական հետևանքները վերացնելու խնդիրը: Նման կարգավորման արդյունքում, թեև ապահովվում է նախկինում հաշվարկված կենսաթոշակի չափը, այնուամենայնիվ, կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանք կատարած անձի՝ լրացուցիչ փաստաթղթերով հիմնավորվող ստաժն ընդհանրապես անտեսվի եւ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացումն իմաստ չունենա, քանի որ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման դեպքում նոր կարգով վերահաշվարկելիս կենսաթոշակի նախկինում հաշվարկված չափը կարող է նվազել:

6. Մինչեւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելն առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած եւ կենսաթոշակի նշանակում ստացած անձինք ակնկալիք են ունեցել, որ իրենց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման արտոնյալ կարգով: Սակայն նույն օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի ուժով այդ արտոնյալ կարգը վերացվել է՝ անտեսելով նաեւ նշված պայմաններում աշխատած անձանց ակնկալիքն առ այն, որ իրենց կենսաթոշակը հաշվարկվելու է արտոնյալ կարգով: Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածը, ի թիվս այլ սկզբունքների, որպես պետական կենսաթոշակային ապահովության եւ պետական կենսաթոշակային ապահովագրության կազմակերպման եւ իրականացման սկզբունք ամրագրում է նաեւ սոցիալական համերաշխու-

թյան եւ սոցիալական արդարության ապահովումը: Սոցիալական արդարության սկզբունքը պահանջում է, որ որոշակի առավելություններ ու արտոնություններ տրամադրվեն վնասակար եւ ծանր պայմաններում աշխատող անձանց:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի 73 հոդվածով նախատեսված կարգավորման արդյունքում կարող է առաջանալ նաեւ օրենքի առջեւ հավասարության սկզբունքի ապահովման հետ կապված խնդիր: Սահմանելով վերահաշվարկման կարգը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու եւ չներկայացնելու պարագայում, օրենքի վիճարկվող նորմը տարբերակված մոտեցում է ցուցաբերում նույն ժամանակահատվածում նույն պայմաններում ձեռք բերված աշխատանքային ստաժի հաշվարկման կարգի նկատմամբ: Օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի կիրառման արդյունքում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ միեւնույն ժամանակահատվածում միեւնույն պայմաններում աշխատած անձանց համար սահմանվեն կենսաթոշակի տարբեր չափեր: Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է, եթե առկա չէ օբյեկտիվ եւ պատճառաբանված արդարացում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարբերակված մոտեցման հիմքում ընկած այնպիսի ձեւական հանգամանքը, ինչպիսին, ի հիմնավորումն աշխատանքային ստաժի, լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու հանգամանքն է, չի կարող դիտվել որպես օբյեկտիվ, իրավաչափ եւ ողջամիտ արդարացում:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը եւ վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի եւ իրավական որոշակիության սկզբունքների իրացումը: Մինչդեռ, օրենքի վիճարկվող նորմն առնչվել է բազմաթիվ մարդկանց իրավունքներին: Միաժամանակ, ՀՀ սոցիալական ապահո-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վագրության պետական հիմնադրամի ներկայացրած տեղեկանքի համաձայն՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո արտոնյալ պայմաններով կենսաթոշակների վերահաշվարկման արդյունքում ապահովագրական ստաժը պակասել է 14.826 տարով (ամսական 3.4 մլն դրամով):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել նաեւ դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15 հունվարի 2008 թվականի
ՍԳՈ-723



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
«ԳՅՈՒՎԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ (ՀԱՏՈՒԿ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարար Ա. Մանուկյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 31-ին եւ 2007 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Գյուղական ճանապարհահատվածի ծրագիր (Հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորություններ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

րի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 31-ին Երեւանում եւ 2007 թվականի նոյեմբերի 15-ին Մանիլայում՝ Ասիական զարգացման բանկի Հատուկ ֆոնդի ռեսուրսներից Հայաստանի Հանրապետությանը վարկ տրամադրելու նպատակով: Ըստ համաձայնագրի՝ նախատեսվում է, որ Ծրագիրը դրական, երկարաժամկետ ազդեցություն կունենա դրանում ընդգրկված թվով չորս կոնկրետ տարածաշրջաններում աղքատության եկամտային եւ ոչ եկամտային պարագծերի վրա՝ ծառայելով երկրի ընդհանուր գյուղական բնակչության շուրջ 10%-ին:

Ծրագրի բաղադրիչներն են՝ ծրագրային ճանապարհների վերականգնումը, ծրագրի կառավարման աջակցությունը եւ խորհրդատվական ծառայությունները՝ կապված ենթածրագրի նախապատրաստման, շինարարական աշխատանքների վերահսկման, աուդիտի, սոցիալական եւ էկոլոգիական գնահատումների եւ այլ աշխատանքների հետ:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն է Ասիական զարգացման բանկի կողմից 2006 թվականի հունվարի 1-ին ընդունված Հատուկ գործառնությունների վարկային կանոնակարգը:

Համաձայնագիրն ունի վեց հավելված՝ Հավելված 1. «Ծրագրի նկարագրություն», Հավելված 2. «Ամորտիզացիոն ժամանակացույց (Գյուղական ճանապարհների հատվածի ծրագիր)», Հավելված 3. «Վարկային միջոցների բաշխում եւ մասհանումներ», Հավելված 4. «Ապրանքների, աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների ապահովում», Հավելված 5. «Ծրագրի իրականացում. Ծրագրային ճանապարհների շահագործում եւ պահպանություն. Ֆինանսական խնդիրներ», Հավելված 6. «Ենթածրագրերի ընտրության չափանիշներ»:

2. «Գյուղական ճանապարհահատվածի ծրագիրն» իրականացնելու համար Ասիական զարգացման բանկը համաձայնագրում շարադրված պայմաններով եւ ժամկետներում իր Հատուկ ֆոնդի ռեսուրսներից Հայաստանի Հանրապետությանը պարտավորվում է տրամադրել քսան միլիոն յոթանասունհինգ հազար Փոխառության հատուկ իրավունքների (20,075,000 ՓՀԻ) համարժեք գումար՝ տարբեր արտարժույթներով:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ պարտավորությունները՝ կապված ինչպես «Գյուղական ճանապարհահատվածի ծրագրի» իրականացման, այնպես էլ ֆինանսական միջոցների օգտագործման եւ տոկոսների վճարման հետ.

- վարկի մարման արտոնյալ ժամանակահատվածում՝ մինչև 2016թ. փետրվարի 1-ը, Ասիական զարգացման բանկին վարկային տոկոսներ վճարել տարեկան մեկ տոկոս (1%) տոկոսադրույքով, իսկ այնուհետև՝ տարեկան մեկ եւ կես տոկոս (1.5%), որը ենթակա է հաշվարկման վարկային հաշվից ստացված վարկի եւ տարբեր ժամանակահատվածներում չմարված գումարների նկատմամբ,

- վճարել վարկի գումարի վրա հաշվարկված տոկոսները եւ ցանկացած այլ վճարներ կիսամյակը մեկ անգամ՝ ամեն տարվա փետրվարի 1-ին եւ օգոստոսի 1-ին,

- վարկային հաշվից ստացված վարկի մայր գումարը մարել ըստ համաձայնագրին կցված՝ ամորտիզացիոն վճարումների Հավելված 2-ի,

- ապահովել, որ վարկային միջոցներն ուղղվեն Ծրագրային ծախսերի ֆինանսավորմանը՝ համաձայնագրի դրույթներին համապատասխան,

- ապահովել, որպեսզի վարկային միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների եւ այլ ծախսերի ֆինանսավորումը, ինչպես նաեւ վարկային գումարների բաշխումը տարբեր կատեգորիաների միջև, ինչպիսիք են ապրանքները, աշխատանքները, խորհրդատվական ծառայությունները եւ այլ ծախսերը, համապատասխանեն համաձայնագրի Հավելված 3-ի դրույթներին, որը կարող է ժամանակ առ ժամանակ լրամշակվել՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի փոխադարձ համաձայնությամբ,

- Ասիական զարգացման բանկի հետ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում վարկային միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա ապրանքների, աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների գնումները պետք է կատարվեն համաձայնագրի Հավելված 4-ի դրույթներին համապատասխան,

- ապրանքների, աշխատանքների եւ խորհրդատվական ծառայությունների առնչությամբ վարկային հաշվից կատարվող մասհանումներն ուղղել միայն Ասիական զարգացման բանկի կողմից՝ որպես գնումների ընդունելի աղբյուրներ ժամանակ առ ժամանակ առանձնանշվող՝ Ասիական զարգացման բանկի անդամ պետությունների կողմից արտադրվող կամ մատակարարվող ապրանքների, ինչպես նաեւ տրամադրվող խորհրդատվական ծառայությունների, եւ Ասիական զարգացման բանկի կողմից ժամանակ առ ժամանակ առանձնանշվող համապատասխանության այլ պա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հանջները բավարարող ապրանքների, աշխատանքների եւ խորհրդատվական ծառայությունների ծախսերի ծածկմանը,

- Ծրագրի իրականացման եւ ծրագրային ճանապարհների գործարկման ընթացքում կատարել կամ ապահովել, որպեսզի կատարվեն համաձայնագրի Հավելված 5-ում շարադրված բոլոր պարտավորությունները,

- Ծրագրի համար նախատեսված առանձին հաշիվներ վարել կամ ապահովել դրանց վարումը, ամենամյա աուդիտի ենթարկել նշված հաշիվները եւ դրանց առնչվող ֆինանսական հաշվետվությունները՝ հետետոհականորեն կիրառվող աուդիտորական չափանիշներին համապատասխան, այնպիսի անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումն ու գործելակերպն ընդունելի են Ասիական զարգացման բանկի համար, տրամադրել Ասիական զարգացման բանկին որքան հնարավոր է շուտ, սակայն ոչ ուշ, քան յուրաքանչյուր համապատասխան ֆինանսական տարվա ավարտից վեց ամիս անց, նշված հաշիվների եւ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հաստատված պատճեններ, ինչպես նաեւ աուդիտորների՝ դրանց վերաբերող հաշվետվությունը, ընդ որում, բոլորը՝ անգլերենով, եւ տրամադրել Ասիական զարգացման բանկին ցանկացած այլ նման տեղեկատվություն նշված հաշիվների եւ ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաեւ դրանց առնչվող աուդիտի մասին, որն Ասիական զարգացման բանկը կարող է ժամանակ առ ժամանակ պահանջել տրամաբանական սահմաններում,

- Ասիական զարգացման բանկին հնարավորություն ընձեռել, նրանից նման առաջարկ ստանալու դեպքում, ժամանակ առ ժամանակ քննարկումներ անցկացնել Հայաստանի Հանրապետության՝ Ծրագրին վերաբերող ֆինանսական հաշվետվությունների եւ Ծրագրի հետ կապված նրա ֆինանսական իրավիճակի վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության կողմից համաձայնագրի Բաժին 4.02(ա) կետում սահմանված կարգով նշանակված աուդիտորների հետ, լիազորել եւ պահանջել, որ նշված աուդիտորների ներկայացուցիչը մասնակցի Ասիական զարգացման բանկի նախաձեռնությամբ նման քննարկումներին, պայմանով, որ ցանկացած նման քննարկում անցկացվելու է Հայաստանի Հանրապետության լիազոր պաշտոնյայի ներկայությամբ, եթե այլ կերպ չի որոշել Հայաստանի Հանրապետությունը,

- Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռել զննության ենթարկելու վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող Ծրագիրը, ապրանքները եւ աշխատանքները, ինչպես նաեւ գործին վերաբերող ցանկացած զրանցումներն ու փաստաթղթերը:

Համաձայնագրի հավելվածներում նախատեսված են Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված մի շարք այլ պարտավորություններ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի հոկտեմբերի 31-ին եւ 2007 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Գյուղական ճանապարհահատվածի ծրագիր (Հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 հունվարի 2008 թվականի
ՍԳՈ- 724**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 4369-AM ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ (ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԳ ՎԱՐԿ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԿԻՐ ♦ 2(47)2008

Քաղ. Երևան

18 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի նոյեմբերի 29-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ 4369-AM ֆինանսավորման համաձայնագրում (Աղքատության հաղթահարման աջակցության չորրորդ վարկ) ամրագրված պարտավորությունների՝ Հա-

յաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007թ. նոյեմբերի 29-ին Երևանում՝ աղքատության հաղթահարման աջակցության ծրագրի ֆինանսավորման նպատակով: Ծրագրի նպատակն է աջակցել աղքատության հաղթահարմանը, մարդկային զարգացման առաջընթացին:

2. Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում երկու առդիր եւ մեկ հավելված, որոնցում ամրագրված են Ծրագրի այն միջոցառումները, որոնց իրականացմանն ուղղվում է վարկավորումը, վարկի մարման ժամանակացույցը եւ համաձայնագրում ներառված սահմանումները:

3. Սույն համաձայնագրով սահմանված են տրամադրվելիք վարկի չափը, վարկի մարման եւ փակման ժամանակացույցը, վճարման արժույթի տեսակը:

4. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

ա) Ընկերակցության պահանջով ժամանակ առ ժամանակ կարծիքներ փոխանակել Ծրագրի իրականացման հարցում արձանագրված առաջընթացի վերաբերյալ, ինչպես նաեւ ներկայացնել պահանջվող մանրամասնությամբ հաշվետվություն,

բ) սահմանված ժամանակացույցին համապատասխան մարել ինչպես վարկի մայր գումարը, այնպես էլ գանձվող տոկոսագումարները,

գ) սահմանված ժամկետներում վճարել ինչպես ֆինանսավորման դուրս չբերված մնացորդի դիմաց պարտավճար, այնպես էլ վարկի դուրս բերված մնացորդի դիմաց սպասարկման տարեկան վճար,

դ) ֆինանսավորումը դուրս բերել մեկ մասնաբաժնով, այսինքն՝ վարկի ողջ գումարը,

ե) ապահովել ֆինանսավորման գումարի յուրաքանչյուր մուտքագրման հաշվառումը ՀՀ բյուջեի կառավարման համակարգում,

զ) գումարները չօգտագործել հավելվածում սահմանված Բացառված ծախսերի ֆինանսավորման համար,

է) ֆինանսավորման շրջանակներում կատարված ծախսերը հիմնավորող բոլոր գրանցումները պահել համաձայնագրի դադարեցման օրից հե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տո մինչև երկու տարի, հնարավորություն տալ ստուգելու այդ գրանցումները,

ը) համաձայնագրի դադարեցման օրից հետո վեց ամսվա ընթացքում համապատասխան պարտականությունների կատարման եւ ֆինանսավորման նպատակների իրագործման մասին կազմել լրիվ ծավալով հաշվետվություն:

5. Համաձայնագրում ամրագրված են նաեւ Ծրագրի իրականացման կատեցման կարգը, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու կարգն ու ժամկետները:

Զննության առարկա համաձայնագիրը, ըստ էության, սկզբնավորում է Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման բնագավառում Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության համագործակցության չորրորդ փուլը, որին նախորդել են մի շարք պայմանագրեր եւ համաձայնագրեր:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 3.**

1. 2007 թվականի նոյեմբերի 29-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջև 4369-AM ֆինանսավորման համաձայնագրում (Աղքատության հաղթահարման աջակցության չորրորդ վարկ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 հունվարի 2008 թվականի
ՍԳՈ- 725**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

1973 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՐՏԻ 3-ԻՆ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԵՎ 1979 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ ԲՈՆՆՈՒՄ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ՝ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏԵՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԳԱՆԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՍԱՄԻՆ ԿՈՆՎԵՆՅԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

22 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Ա. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1973 թվականի մարտի 3-ին Վաշինգտոնում ստորագրված եւ 1979 թվականի հունիսի 22-ին Բոննոնում լրամշակված՝ Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առետրի մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նի Հանրապետության սահմանադրական դատարանում 19.10.2007թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրվել է 1973թ. մարտի 3-ին՝ Վաշինգտոնում եւ լրամշակվել 1979թ. հունիսի 22-ին՝ Բոննում:

2. Կոնվենցիայի գլխավոր նպատակը վայրի կենդանական ու բուսական աշխարհի որոշակի տեսակների պահպանությունն է գերշահագործումից, իսկ հիմնական խնդիրն է կարգավորել վայրի կենդանական ու բուսական աշխարհի որոշակի տեսակների միջազգային առետուրը՝ դրանց գոյատևումն ապահովելու համար:

3. Կոնվենցիայով կարգավորվում են կենդանիների ու բույսերի շուրջ 30 հազար տեսակների միջազգային առետրի հետ կապված հարաբերությունները՝ համապատասխան հավաստագրերի ու թույլտվությունների տրամադրման միջոցով:

4. Կոնվենցիայի բաղկացուցիչ մասն են կազմում երեք հավելվածները, որոնք կարգավորում են սույն կոնվենցիայով սահմանված բույսերի ու կենդանիների որոշակի տեսակների միջազգային առետուրը:

5. Սույն կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) կանոնակարգել կոնվենցիայի հավելվածներում ընդգրկված տեսակների նմուշների առետուրը,

բ) հավելվածներում ամրագրված տեսակների նմուշների արտահանումը, վերաարտահանումն ու ներմուծումը թույլատրել բացառապես կոնվենցիայի դրույթներին համապատասխան,

գ) կոնվենցիայի որոշ դրույթներ չկիրառել այն նմուշների դեպքում, որոնք համարվում են անձնական կամ տնային օգտագործման պարագաներ, ինչպես նաև ոչ առետրային վարկերի, նվիրատվությունների, գիտնականների կամ պետության կառավարման մարմնի կողմից գրանցված գիտական ինստիտուտների միջև փոխանակվող որոշ նմուշների նկատմամբ, որոնք ունեն կառավարման մարմնի տված կամ հաստատված պիտակ,

դ) ձեռնարկել համապատասխան միջոցներ կոնվենցիայի դրույթների կիրառման, ինչպես նաև դրանց խախտման դեպքում առետուրն արգելելու նպատակով,

ե) պատժամիջոցներ կիրառել այդ նմուշների առետրի եւ/կամ տնօրինման համար, առգրավել կամ այդ նմուշները վերադարձնել այլ պետության,

զ) վարել տեսակների նմուշների առետրի գրանցումներ, պատրաստել

տարեկան հաշվետվություններ տրամադրված թույլտվությունների եւ հավաստագրերի վերաբերյալ, ինչպես նաեւ պատրաստել երկամյա հաշվետվություններ կոնվենցիայի դրույթների իրականացման համար ձեռնարկված օրենսդրական, կարգավորիչ եւ վարչական միջոցառումների վերաբերյալ՝ ապահովելով այդ տեղեկատվության մատչելիությունը,

է) կոնվենցիայի նպատակների համար նշանակել մեկ կամ ավելի կառավարման մարմիններ, որոնք կունենան ՀՀ անունից թույլտվություններ եւ հավաստագրեր տրամադրելու իրավասություն, ինչպես նաեւ մեկ կամ ավելի գիտական մարմիններ:

6. Կոնվենցիային կից հավելվածներում առկա կենդանական ու բուսական աշխարհի շուրջ հիսուն տեսակներ գոյություն ունեն նաեւ Հայաստանում եւ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

7. Սույն կոնվենցիայով կարգավորվում են նաեւ հավելվածներում ներառված բոլոր տեսակների նմուշների արտահանման, ներմուծման եւ վերաարտահանման համար տրամադրվող թույլտվությունների եւ հավաստագրերի ձեռքբերման կարգն ու պայմանները, դրանց գործողության ժամկետները, ինչպես նաեւ առետրի գրանցման, հաշվետվությունների ներկայացման, կոնվենցիայում եւ հավելվածներում կատարվող փոփոխությունների իրականացման, կոնվենցիայից բխող վեճերի լուծման, կոնվենցիայի ընդունման, վավերացման, հաստատման, ուժի մեջ մտնելու, դրա վերաբերյալ վերապահումներ անելու, կոնվենցիայից հրաժարվելու կարգն ու պայմանները:

8. Կոնվենցիան ամրագրում է նաեւ սույն կոնվենցիան խախտելու դեպքում ձեռնարկվելիք միջոցների շրջանակը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 1973 թվականի մարտի 3-ին Վաշինգտոնում ստորագրված եւ 1979 թվականի հունիսի 22-ին Բոննոմ լրամշակված՝ Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առետրի մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**22 հունվարի 2008 թվականի
ՍԳՈ- 726**

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(47)2008
87



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹՐԱՖԻԿԻՆԳԻ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԳԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Ա. Վարդանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի մայիսի 16-ին Վարշավայում ստորագրված՝ Մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(47)2008
88

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ նուտքագրված 2007 թվականի դեկտեմբերի 3-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրվել է 2005 թվականի մայիսի 16-ին՝ Վարշավայում: Այն նպատակ ունի կանխարգելել մարդկանց շահագործումը (թրաֆիկինգը)՝ անկախ վերջինիս դրսևորման ձեւից եւ բնույթից, պաշտպանել թրաֆիկինգի զոհերի իրավունքները, ապահովել մարդկանց շահագործման փաստերի առնչությամբ հարուցված քննությունների եւ քրեական հետապնդումների արդյունավետությունը, ինչպես նաեւ խթանել միջազգային համագործակցությունը մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) դեմ պայքարի ոլորտում:

2. Հայաստանի Հանրապետությունը սույն կոնվենցիայով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

ա) համակարգել եւ/կամ ամրապնդել ներպետական մարմինների փոխհամագործակցությունը մարդկանց շահագործումը (թրաֆիկինգը) կանխարգելելու եւ դրա դեմ պայքարելու գործում, արդյունավետ միջոցների կիրառմամբ մշակել այնպիսի քաղաքականություն եւ ծրագրեր, որոնցում առաջնային դիրքերում կլինեն մարդու իրավունքների, ներառյալ երեխաների շահերի պաշտպանությունը, գենդերային հավասարությունը,

բ) ձեռնարկել կամ ամրապնդել օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային եւ այլ միջոցներ, որոնք կնպաստեն մարդկանց, հատկապես կանանց եւ երեխաների շահագործման բոլոր ձեւերի պահանջարկի վերացմանը,

գ) բոլոր, այդ թվում օրենսդրական միջոցներով ուժեղացնել սահմանների վերահսկողությունը, չխախտելով անձանց ազատ տեղաշարժման առնչությամբ ստանձնած միջազգային պարտավորությունները,

դ) թրաֆիկինգը կանխարգելող եւ դրա դեմ պայքարող իրավասու մարմինները համալրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով, գործադրելով բոլոր հնարավոր միջոցները թրաֆիկինգի զոհերին հայտնաբերելու համար, անհրաժեշտության դեպքում համագործակցելով նաեւ կոնվենցիայի մասնակից այլ պետությունների եւ համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ, իսկ զոհին հայտնաբերելու դեպքում վերջինիս տրամադրել կացության թույլտվություն,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ե) պաշտպանել զոհերի անձնական կյանքն ու ինքնությունը, վերջիններին վերաբերող անձնական տվյալները պահպանել եւ օգտագործել «Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակումից անձանց պաշտպանության մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

3. Կոնվենցիայում կարեւորվում են նաեւ այնպիսի հարցեր, որպիսիք են՝ զոհերի ֆիզիկական, հոգեբանական եւ սոցիալական վերականգնմանը նպաստող օրենսդրական կամ այլ միջոցների կիրառումը, զոհին կացության կարգավիճակ տրամադրելը, զոհերի՝ անվճար իրավաբանական խորհրդատվություն եւ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, զոհի վնասների փոխհատուցման երաշխավորումն ապահովող օրենսդրական եւ այլ միջոցների ձեռնարկումը:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նաեւ տուժած երեխաներին չվերադարձնել որեւէ պետություն, եթե հիմք կա ենթադրելու, որ դա չի բխում երեխայի լավագույն շահերից, վերը թվարկված միջոցները կիրառելիս՝ խթանել գենդերային հավասարությունը եւ վարել գենդերային իրավահավասարությանն ուղղված քաղաքականություն:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձված մարդկանց շահագործման քրեականացմանը եւ դրա հետ կապված մի շարք հարցերի, ինչպիսիք են՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը, պատժամիջոցների կիրառումը, ծանրացուցիչ հանգամանքների թվարկումը եւ այլն:

Նախատեսված է նաեւ մոնիտորինգի մեխանիզմ, որով ստեղծվելու է թրաֆիկինգի դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբ՝ իր կանոնակարգով, որը պետք է վերահսկի, թե Կողմերն ինչպես են իրականացնում սույն կոնվենցիան:

Կոնվենցիան սահմանում է նաեւ գնահատման ընթացակարգը, նախատեսում է տեղեկատվության փոխանակման, խնդրո առարկա փաստաթղթում փոփոխություններ կատարելու, վերջինիս ուժի մեջ մտնելու, դրան միանալու, միանալու մասին ծանուցելու, կոնվենցիան չեղյալ հայտարարելու կարգն ու ժամկետները:

4. Սույն կոնվենցիան լրացնում է միջազգային պայմանագրերի այն շարքը, որոնք արդեն իսկ վավերացրել է Հայաստանի Հանրապետությունը: Դրանք են. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան եւ դրան կից «Մարդկանց, հատկապես կանանց եւ երեխաների շահագործման (թրաֆիկինգի) կանխարգելման, արգելման եւ պատժի մասին», «Ցամաքով, ծովով կամ օդով մարդկանց ապօրինի սահմանահատման դեմ» արձանագրությունները, «Երեխայի իրավունքների

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային կից «Երեխաների առքուվաճառքի, մանկական մարմնավաճառության ու մանկական պռոնոգրաֆիայի» եւ «Ձինված հակամարտություններում երեխաների մասնակցության մասին» արձանագրությունները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց Ց .

1. 2005 թվականի մայիսի 16-ին Վարչապետի ստորագրված՝ Մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 հունվարի 2008 թվականի
ՍԳՈ- 727



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-ԻՆ ՅԱԼԹԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի մայիսի 25-ին Յալթայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մասնագետների մասնագիտական վերապատրաստման եւ որակավորման բարձրացման ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ սահմանադրական դատարանում 09.11.2007թ. մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Լ. Մկրտչյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Քննության առարկա համաձայնագիրն Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կողմից ստորագրվել է 2007թ. մայիսի 25-ին Յալթայում՝ նպատակ ունենալով արագացնել Կողմերի տնտեսության տեխնոլոգիական բարեփոխումը եւ այն որակյալ մասնագետներով ապահովելը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, մասնավորապես պարտավորվում է.

- ձեռնարկել համաձայնեցված միջոցներ նորմատիվ իրավական բազայի կատարելագործման եւ կրթական գործունեության որակի վերահսկման ուղղությամբ,

- իրականացնել մասնագետների որակավորման բարձրացումն ու մասնագիտական վերապատրաստումն ապահովող կրթական հաստատությունների արտոնագրումը, մասնագետների մասնագիտական վերապատրաստումն ապահովող կրթական հաստատությունների ատեստավորումը եւ պետական հավատարմագրումը:

3. Յուրաքանչյուր Կողմ որոշում է լիազորված մարմին /մարմիններ/, որը /որոնք/ պատասխանատու է /են/ մասնագետների մասնագիտական վերապատրաստման մասին պետական նմուշի փաստաթղթերի ճանաչման համար, ինչպես նաեւ մասնագետների որակավորման բարձրացման եւ մասնագիտական վերապատրաստման համակարգի մասին մյուս Կողմերին տեղեկատվության տրամադրման համար:

Համաձայնագրով Կողմերը պարտավորվում են աջակցել միմյանց միջեւ ուղիղ կապերի զարգացմանը եւ աշխատանքային փորձի փոխանակմանը, կրթական ծառայությունների գովազդին եւ ցուցահանդեսների կազմակերպմանը:

4. Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են նրանց կողմից կնքված այլ միջազգային պայմանագրերից:

Համաձայնագիրը նախատեսում է վերջինիս դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերի լուծման, տեղեկատվության փոխանակման, ինչպես նաեւ ուժի մեջ մտնելու եւ գործողության դադարեցման կարգն ու ժամկետները:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5. Համաձայնագրի դրույթները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին, ինչպես նաև կարեւոր իրավական երաշխիք են ստեղծում ՀՀ Սահմանադրության 39 հոդվածում ամրագրված իրավունքի իրացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի մայիսի 25-ին Յալթայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մասնագետների մասնագիտական վերապատրաստման եւ որակավորման բարձրացման ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 հունվարի 2008 թվականի

ՍԳՈ- 728



**ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**2008թ. ապրիլի 12-ին լրացավ
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավար պարոն
Առուշան Հակոբյանի ծննդյան
60-ամյակը:**



Ծննդյան հոբելյանի կապակցությամբ պարոն Ա. Հակոբյանին շնորհավորել է ՀՀ սահմանադրական դատարանը, որում մասնավորապես ասված է «ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմը՝ Ձեր անմիջական ղեկավարությամբ, անցած տարիներին կարողացավ իր նպաստը բերել դատարանի ձևավորման ու կայացման գործին, ապահովելով աշխատանքային բոլոր օղակների ներդաշնակ ու անխափան գործունեությունը: Ահա թե ինչու սահմանադրական դատարանի, որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող գործունե կառույցի զարգացումը, օրենքով սահմանված գործառույթների իրականացումը մեծապես խարսխված է նաև Ձեր անձնական

ջանքերի, նվիրումի, պարտականությունների ամենաբազմաբնույթ և ծանր բեռը սեփական ուսերին բարձր պատասխանատվությամբ կրելու, անցած տարիների Ձեր ողջ աշխատանքային գործունեության ընթացքում վաստակած մեծ հեղինակության վրա»:

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմը նույնպես ջերմորեն շնորհավորում է պարոն Առուշան Հակոբյանին ծննդյան 60-ամյակի առթիվ, ցանկանում քաջառողջություն, մաքրում երջանկություն, անսպառ ուժ ու եռանդ, արևշատություն, աշխատանքային, ստեղծագործական հաջողություններ գործունեության բոլոր բնագավառներում:

Փետրվարի 4-ին Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության իրավական վերլուծաբան Քերեն Գեյներին՝ վերջինիս խնդրանքով: Տիկին Գեյները նախորդ այցի (հունվարի 31) ընթացքում քննարկված թեմաների հետ կապված ՄԴ նախագահից լրացուցիչ պարզաբանումներ խնդրեց, որոնք վերաբերում էին սահմանադրական բարեփոխումներից հետո ՄԴ գործունեության մեջ նկատվող նորություններին, ՀՀ Ընտրական օրենսգրքի որոշ հոդվածների բացատրությանը:

Մարտի 6-ին, այս տարվա մեջ երկրորդ անգամ, ՄԴ նախագահ Գ. Հարությունյանին այցելեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի դիտորդական առաքելության ղեկավար Ջոն Պրեսկոտը:

Կայացավ զրույց՝ ՄԴ դիմած ՀՀ Նախագահի ընտրություններում ՀՀ Նախագահի թեկնածու՝ Լեոն Տեր-Պետրոսյանի դիմումի շուրջ:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 23.04.2008 թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70x100 1/16
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՄԴ փեդեկագիրը ՀՀ
քարչրագույն որակավորման
հանչնաժողովի որոշմամբ ընդգրկված է
ալենախոսությունների արդյունքների
տպագրման համար ընդունելի
պարբերականների ցանկում*